ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 214 (24495), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۴۹۵) ۲۱۴ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023

آلیک

دوشنبه – ۱ آبان ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

ՄԱԿ-Ի ԱԽ-Ի ՀԵՏ ՅՈՅՍԵՐ ԿԱՊԵԼՆ ԱՆԻՄԱՍՏ Է

«ԱԼԻՔ» - Հանրապետութեան նախագահ այսթ. Մէյդ Էբրահիմ Ռէյիսին երէկ՝ երեկոյեան ընդունել է Հարաւային Աֆրիկայի Հանրապետութեան ԱԳ նախարար Գրէյս Նալեդի Մանդիսային:

Հանդիպման ընթացքում անդրադառնալով պաղեստինեան ճգնաժամին եւ սիոնիստական ռեժիմի կատարած յանցագործութիւններին, հարցականի տակ է դրել ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի գործառոյթը աշխարհում անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատման եւ պահպանման գործում:

«Սիոնիստական ռեժիմին զինելով, ԱՄՆ-ն մեղսակից է Գազայի անպաշտպան ժողովրդի դէմ այդ ռեժիմի կատարած յանցագործութիւններում: Միեւնոյն ժամանակ, ԱՄՆ-ն կանխում է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում այդ յանցագործութիւնները դատապարտող բանաձեւի ընդունումը: Այլեւս յոյս չկայ, որ այս խորհուրդը որեւէ դերակատարութիւն կունենայ համաշխարհային խաղաղութեան պահպանման գործում»,- ասել է նախագահը:

Արման Թաթոյեան.

«Արցախի բնակավայրերը մեկուսացուել են նախապէս պլանաւորուած մեխանիզմով»

Իրաւունքի եւ արդարութեան կենտրոն «Թաթոյեան» հիմնադրամի տնօրէն, նախկին օմբուդսմէն Արման Թաթոյեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է. «Ապացոյցներով քարտէզների վրայ յստակ ցոյց ենք տուել Արցախի նկատմամբ 2023 թ. սեպտեմբերի 19-20-ի ադրբէջանական զինուած յարձակումների, զինուած առաջխաղացումների, Արցախի հայերի բռնի տեղահանումների ուղղութիւնները: Այս ապացոյցները հիմնաւորում են, որ Արցախի բնակավայրերը մեկուսացուել են նախապէս պլանաւորուած մեխանիզմով՝ Արցախում քաոս ու խուճապ առաջացնելու համար: Սա նաեւ արուել է յանցանքների հետքերը թաքցնելու նպատակով: Մեկուսացուել են խոշոր բնակավայրերն իրենց գիւղերով՝ Մարտակերտը, Ասկերանը, Մարտունին եւ Ստեփանակերտը:

Այդ օրերին ադրբէջանական զինուած ուժերը թիրախաւորել էին նաեւ բնակելի տներ, մանկապարտէզներ ու դպրոցներ, կենսական նշանակութեան ենթակառուցածքները (օրինակ՝ գիւղերի դպրոցներ, ամբողջ Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգը եւ այլն)»:

«Yerkir.am»

Ամիր Աբդոլլահեան.

«Գազայում պատերազմի շարունակման ցանկացած սխալ հաշուարկ կարող է լուրջ հետեւանքներ ունենալ տարածաշրջանում»

(Տես 8-րդ էջում)

133 ՏԱՐԻ.
ԱՆՍԱԿԱՐԿ ՆԻՒՐՈՒՄ՝
ՀԱՅԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ՀՅԴ 133-ԱՄԵԱԿԻՆ
ՆԻՒՐՈՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Օրւայ բանախօս՝
ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ
ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ պատգամաւոր, «Հայաստան» խմբակցութեան անդամ

Խօսք կունենայ՝
ԱԳՆԵՍԱ ԽԱՄՈՅԵԱՆԸ
Լրագրող, ՀՀ ԱԺ պատգամաւոր, «Հայաստան» խմբակցութեան անդամ

Նաեւ՝
Գեղարուեստական յայտագիր

Միջոցառումը տեղի կունենայ՝
Հինգշաբթի, հոկտեմբերի 26-ին, 2023 թ.,
ժամը 19:30-ին,
Հ.Մ.Ա.Կ.-ի «Կոմիտաս» սրահում (Նոբահար)

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Այսօր Թեհրանում «3+3» ձեւաչափով հանդիպում կանցկացուի



«ԱԼԻՔ» - Այսօր, Թեհրանում Իրանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբէջանի եւ Հայաստանի արտգործնախարարների «3+3» ձեւաչափով երկրորդ հանդիպումը տեղի կունենայ:

Հանդիպմանը կը քննարկուեն հարաւկովկասեան տարածաշրջանի հարցերը՝ քաղաքական, տնտեսական, անվտանգութեան, տարանցման, էներգետիկայի եւ այլ ոլորտներում, տարածաշրջանային համագործակցութիւններն ընդլայնելու ուղղութեամբ ջանքեր գործադրելու համար:

Յիշեցնենք, որ նոյն ձեւաչափով առաջին հանդիպումը փոխարտգործնախարարների մակարդակով անկացուել է 2021 թւականին Մոսկւայում՝ առանց Վրաստանի մասնակցութեան:

Վրաստանը չի մասնակցի նաեւ Թեհրանի հանդիպմանը: Այս մասին պաշտօնական յայտարարութեամբ հանդէս է եկել այդ երկրի ԱԳ նախարարութիւնը:

(Շար. 8-րդ էջում)

Ժաննա Վարդանեան.

««3+3» չի դառնայ հիմնական ձեւաչափ»

«ԱԼԻՔ» - Հարաւային Կովկասում Թեհրանի առաջ քաշած «3+3» ձեւաչափի կարեւորութիւնը հէնց այն առումով է, որ Իրանը մասնակցում է այդ ձեւաչափին: Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յայտնեց իրանագէտ Ժաննա Վարդանեանը՝ անդրադառնալով տարածաշրջանում «3+3» խորհրդակցական հարթակի այսօր նախատեսուած հանդիպման նշանակութեանը:

Նրա խօսքով՝ Իրանը եւ Հայաստանը ունեն համատեղ շահեր, մասնաւորապէս Սիւնիքի եւ «Զանգեզուրի միջանցք»-ի հարցում, հետեւաբար յատկապէս այս հարցերի շուրջ երկու երկրները կարող են հանդէս գալ միեւնոյն դիրքերից եւ առաջ տանել սեփական օրակարգը, բայց այն կախուած է նրանից, թէ ինչ բնոյթի է լինելու այս ձեւաչափով քննարկումները:

Այս ձեւաչափով միայն 1 հանդիպում է կայացել, օրակարգում ներառուած են եղել տնտեսական եւ հաղորդակցութիւնների ապաշրջափակման, բայց ոչ քաղաքական հարցեր: Իրանագէտը շեշտեց, որ 2-րդ հանդիպումը Իրանի ղեկավարութիւնն ամէն կերպ փորձեց կազմակերպել Թեհրանում: Իրանական կողմը ցանկանում է, որպէսզի ներգրաւածութիւն ունենայ տարածաշրջանում եւ աւելի խորացնի իր ազդեցութիւնը, այս հարթակի միջոցով, որոշակի յաջողութիւններ է ձեռք բերում:

Անդրադառնալով «3+3» ձեւաչափով նախատեսուած երկրորդ հանդիպմանը, Վրաստանի բացակայութեանը իրանագէտը նկատեց, որ Վրաստանը չի մասնակցել նախորդին եւ հիմա էլ չի մասնակցելու, եւ ըստ էութեան, սա ոչ թէ «3+3» այլ «2+3» ձեւաչափ է, իսկ Վրաստանի բացակայութիւնը պայմանաւորուած է ռուսական գործօնով, որովհետեւ Վրաստանը հրաժարւում է մասնակցել ցանկացած տեսակի ձեւաչափերին, որտեղ ներկայ է նաեւ Ռուսաստանը:

Հետեւաբար, քանի որ այս ձեւաչափում այդ երկիրը եւս ներկայ է, կարող ենք յստակեցնել, որ առհասարակ Վրաստանը չի մասնակցի, լինի այս ձեւաչափով կամ որեւէ ուրիշ:

Վարդանեանի պնդմամբ՝ Ադրբէջանը վերջին շրջանում խուսափում է եւրոպական ձեւաչափերից եւ սկսել է

(Շար. 8 -րդ էջում)

ARAM®
coffee
ԱՐԱՄ
սուրճ قهوه آرام
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Գեղամ Մանուկեան.

«Դեռ շա՛տ բան կը բացայայտուի ապագայ դատերի ժամանակ, այդ թւում՝ ՀՀ Զինուած ուժերի կիրառման պլանը, որը չգործարկուեց»

«Պրեսսինգ» հաղորդաշարում Սաթիկ Մէյրանեանը հիւրընկալել էր ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, ՀՅԴ ԳՄ անդամ Գեղամ Մանուկեանին:

Հարցազրոյցի հիմնական թէզերը՝ ստորեւ.

-Տիգրան Աւինեանի՝ ցածր ձայնով, միատոն խօսող փափկասունութեան մէջ դիւային բան կայ իրականում: Ժամանակին 1.3 միլիոն բնակչութիւն ունեցող Երեւանի մեղալով պարգեւատրում էին Երեւանի համար էտալոն համարուող մարդիկ: Հիմա հասել ենք այն վիճակին, որ այդ բարձունքից այնքան ենք իջել, որ Երեւանի քաղաքապետի պաշտօնը զբաղեցնող Տիգրան Աւինեանը Երեւանի ոսկէ մեդալով պարգեւատրում է մարդ ծեծող կարմիր գլխարկ (կարմիր բերետաւոր) Հայկազ Ջոմարդեանին:

-Սրանց իշխանութեան ժամանակ «Մեր ժամանակների հերոսը» մրցանակաբաշխութիւնը ստեղծուեց, որի ժամանակ մեծարում էին ոչ թէ մտաւորականներին, այլ փող աշխատող բիզնեսմեններին: Այդ ժամանակ էր, որ առաջին անգամ այդ միջոցառմանը ներկայ Արցախի նախագահ Բակօ Սահակեանին անուանեցին Արցախի մարզպետ:

- Իրականում ՀՀ-ում թշնամական մի ամբողջ բանակ է գործում, բանակ սեփական ժողովրդի դէմ: Թշնամական ասելով՝ նկատի ունեմ տեղեկատւական այն տեռորը, որ կիրառւում է հայ ժողովրդի դէմ: Հիմա նոր ենթաօպերացիա է իրականացւում՝ արցախցիների մէջ պառակտում մտցնելը: Այդ բանակի ստրուկն է Հանրային հեռուստաընկերութիւնը: Վստահ եմ՝ մի օր բոլոր այդ մարդիկ եւ դրանց սպասարկողները կանգնելու են դատարանի առաջ: Պատգամաւորներ, հասարակական գործիչներ, փորձագէտներ... Բոլորի հարցազրոյցները վաղը դրւելու են մեղադրական եզրակացութեան հիմքում:

-Այս իշխանութեան ռազմավարութեան մէջ առանցքային է այն, որ պէտք է ջնջել Արցախ բառը ու Արցախի հետ ասոցացւող ամէն ինչ: Վերցնենք թէկուզ Արցախի Պետական համալսարանի հարցը: Ուզում են այն վերացնելով՝ վերացնել Արցախեան զարթօնքի հիմնական հաւաքատեղիներից մէկը: Կոչս ուղղում եմ համալսարանի ղեկավարութեանը՝ հարցը պէտք է արթուն պահել, թոյլ չտալ, որ այն փակւի:

- Տարիներ շարունակ ՀՀ բիւջէից Արցախին վարկային տեսքով որոշակի գումարներ են տւել, եւ միայն այս իշխանութիւններն են, որ բոպէն մէկ խօսում են այն մասին, թէ որքան փող են տւել Արցախին: Մարդկանց հայրենազրկել են, դարձրել գաղթող ու խօսում են փող տալու մասին: Հիմա էլ թիրախաւորում են, 4 տարի է՝ այդ թշնամանքն են սերմանում արցախցիների հանդէպ: Եւ չեն խօսում այն մասին, թէ ինչ Արցախն ինչ է տւել Հայաստանին տասնամեակներ շարունակ:

-Մեր երկրի ազգային անվտանգութեան փլուզումը նաեւ տեղեկատւական անվտանգութեան տեսքով է:

-44-օրեայ պատերազմի օրերին ստեղծուած Հայաստան-2020 չաթը, որ ստեղծւել էր Հայաստանի Ժուռնալիստների միութեան (ՀԺՄ) նախագահ Սաթիկ Մէյրանեանի նախաձեռնութեամբ պատերազմի օրերին, խմբագիրների մասնակցութեամբ, պահել եմ: Վաղը հատ-հատ դատարանում ներկայացնելու եմ: Լրատւամիջոցների ղեկավարներին իշխանութեան ներկայացուցիչների առաջին պահանջն էր՝ չհրապարակել յուղարկաւորութիւնների կադրեր: Իւրաքանչիւրս՝ որպէս տեղեկատւական անվտանգութեան մաս, գիտակցելով դա, չէինք էլ հրապարակում, յետոյ հասկացանք՝ ինչի էին մեր առջեւ այդ պահանջը դնում:

-Հիմա փորձ է արւում Արցախի՝ օրինական ընտրած տարբեր պետական ատեաններին մեկուսացնել, մոռացութեան տալ: Երէկւանից տեղեկատւական հոսքեր են գալիս՝ ովքեր էին Արցախի ներկայացուցչութեան դէմ այդ ակցիաների կազմակերպիչները՝ Անվտանգութեան խորհրդի քարտուղար (ԱԽՔ) Արմէն Գրիգորեան, ծագումով արցախցի, Սամուէլ Բաբայեան, Հայկ Խանումեան…

-Ժողովուրդ, դուք մոռանո՞ւմ էք՝ այս ամենի պատասխանատուն ով է: Այս ամենի պատասխանատուն անուն ունի՝ Նիկոլ Փաշինեան:

- Օրերս, որպէս ԱԺ պատգամաւոր, բանտում հանդիպել եմ Արցախի ՊԲ հրամանատար Միքայէլ Արզումանեանին: Յիշո՞ւմ էք՝ Նիկոլ Փաշինեանն ի՞նչ ասաց՝ Շուշիի մեղաւո՞ր էք ուզում, հէն է, բանտում նստած է: Միքայէլ Արզումանեանին արդէն մեղաւոր է նշանակել:

-Արցախը յանձնող Նիկոլ Փաշինեանը բազմիցս յայտարարել է, որ Արցախը տեսնում է Ադրբէջանի կազմում, բայց այսօր այս նոյն իշխանութիւնները մեղաւոր են փորձում նշանակել Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանին:

- Մոռանում են Արցախի նախագահի ընտրութեան օրը Նիկոլ Փաշինեանի հեռախօսազանգերը՝ Գերմանիա, Իրան, Ֆրանսիա… Բոլոր պաշտօնական այդ հաղորդագրութիւնների վերջին տողն էր կարեւոր՝ պատրաստ եմ օր առաջ Ալիեւի հետ նստել մէկ ընդհանուր սեղանի շուրջ: Մոռանում են, որ սեպտեմբերի 11-ին Նիկոլ Փաշինեանը հեռախօսազրոյց է ունեցել Էրդողանի հետ: Մոռանում են, որ սեպտեմբերի 10-ին Էրդողանն ասում էր, որ կարող է վաղը Նիկոլի հետ խօսել: Մոռանում են, որ նոյն օրերին հեռախօսազանգերից յետոյ Նիւ Եօրքում, «Թուրքական տանը» թուրք գործարար շրջանակների հետ հանդիպման ժամանակ Էրդողանն ասել է՝ «Արցախում ադրբէջանական ուժերը յարձակւել են, եւ դա պայմանաւորուած էր նախագահական ընտրութիւններով»: Արցախի նախագահի ընտրութիւններով անհանգիստ էր ե՛ւ Ադրբէջանը, ե՛ւ Նիկոլ Փաշինեանը: Ի վերջոյ, սեպտեմբերի 19-ի ագրեսիայի առաջին իսկ օրն Անվտանգութեան խորհրդի նիստում Հայաստանի իշխանութիւններն ասացին՝ մենք գործ չունենք: Յաջորդ օրը Նիկոլ Փաշինեանն ասաց՝ ես պատրաստւել եմ տեղահանած արցախցիներին տեղաւորելուն:

- Էլի շատ բաներ են մոռանում: Ապագայի դատավարութիւնների ժամանակ լինելու են նաեւ փաստական տւեալներ, այդ թւում՝ ՀՀ Զինուած ուժերի կիրառման պլանը՝ հաստատուած ՀՀ Գլխաւոր շտաբի պետի կողմից՝ ինչպիսին պէտք է լինէին Զինուած ուժերի գործողութիւնները: Այդ փաստաթղթի դէպքում շատ-շատ մարդիկ դեռ պատասխան են տալու, որ անպաշտպան թողեցին Արցախը, արցախահայութեանը, Արցախի Պաշտպանութեան բանակին:

- Այն, ինչ քննադատւում է հիմա՝ Սամուէլ Շահրամանեանի հրամանագիր, այլ գործողութիւններ, որոշումներ, մի բան յստակ է՝ Նիկոլ Փաշինեանը ամբողջովին տեղեակ է եղել դրանցից:

- Մեփական PR-ի համար Նիկոլ Փաշինեանը կարող էր որդուն ուղարկել Արցախ՝ ծառայելու, Արցախի հետ ուղղաթիռային կապն անհեթեթ պատճառաբանութեամբ դարձնել երթուղային տաքսի, յետոյ ասել՝ ես ի՞նչ կապ ունեմ Արցախի հետ, որ Արցախի անունից բանակցեմ: Նա քիթը մտցրել է ամէն ինչի մէջ:

- Սրանք սրբութիւն չունեն: Մեղքն իրենց վրայից թօթափելու համար ոչ միայն Սամուէլ Շահրամանեանին կը ձերբակալեն, այլեւ Յիսուս Քրիստոսի նկատմամբ հետախուզում կը յայտարարեն:

-Տիգրան Աւինեանի երդման արարողութեան ժամանակ ամենաահաւորը երկրորդ թէ երրորդ շարքում ՀՀ ԶՈՒ Գլխաւոր շտաբի պետ, ծնունդով հադրութցի, գեներալ-լէյտենանտ Էդուարդ Ասրեանին տեսնելն էր:

- Երկու զուգահեռ իրականութիւն կայ: Մի տեղ Ադրբէջանը զինւում, պատրաստւում է պատերազմի, մի այլ տեղում Նիկոլ Փաշինեանը ճղճղան ձայնով «ժողովրդավարութիւն» է գոռում ու մանիպուլացնում սեփական ժողովրդին: Ինչպէս մարդուն թմրանիւթի վրայ են նստեցնում, նոյն կերպ Հայաստանի ժողովրդին կտրում են իրականութիւնից: Դուրս գաս փողոց, ժողովրդի մեծ մասը գիտի՝ իբր Հայաստան լիքը զէնքեր, տանկեր են եկել… Քարոզչական ստերով կերակրում են մարդկանց, բթացնում: Մսադացի նման մեր երկիրը մաշեցնում են:

- Փաշինեանն այստեղ էլ է խաբում, երբ ասում է՝ բոլոր ճանապարհները բացւելու են: Իրականում բացւելու են այն ճանապարհները, որոնք ասելու է Ադրբէջանը: Մեզ համար աւելի ձեռնտու ճանապարհներն Ալիեւը թոյլ չի տալու բացել:

- Իրանը շատ յստակ տարբեր մակարդակներում յայտարարել է իր կարմիր գծերի մասին: Փոխանակ Իրանի կոշտ դիրքորոշմանն ի պատասխան՝ Հայաստանը գործնական

(Շար. 7-րդ էջում)

Տիգրան Աբրահամեան.

«Արցախի իշխանութիւնն այս պահին ունի մի քանի առանցքային խնդիր»

Տիգրան Աբրահամեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է. «Արցախի ներկայացուցչութեան դէմ տեղի ունեցած իրադարձութիւնները, որոնք ակնյայտօրէն հրահրուած էին հայաստանեան իշխանութիւնների եւ նրանց ծառայութիւն մատուցող քաղաքական դիակների կողմից, մասնակցային առումով, այնուամենայնիւ, միատարր չէին եւ բաժանւում էին 3 հիմնական խմբերի:

Առաջին խումբ, կազմակերպւած՝ մի քանի տասնեակ կազմող անձինք էին, որոնք համախոհութեամբ ասոցացւում էին Փաշինեան-Սամուէլ Բաբայեան տխրահռչակ տանդեմին:

Ենթադրելի է, որ նպատակը «դերոշ» սարքելն ու Ներկայացուցչութեան շէնք գրաւելն էր, որը պէտք է ուղեկցւէր կոնկրետ անձանց նկատմամբ բռնութեան գործադրմամբ եւ դրանով ամբողջութեամբ փակւէր Արցախի էջը:

Երկրորդ խումբ, կոնկրետ անձինք էին, ովքեր տեղեկութիւններ ունէին այն մասին, որ Արցախի նախկին նախագահ Արայիկ Յարութիւնեանն իր պաշտօնավարման եւ յատկապէս դրա վերջին օրերին խիստ կասկածելի ֆինանսական գործարքներ է իրականացրել, հարստացել ու հարստացրել իր թիմակիցներին կամ իր կողմից տարբեր օպերացիաներ իրականացնող խմբերին:

Այս մարդիկ իրենց պատկերացրած ձեւերով փորձում են հասնել Արայիկ Յարութիւնեանի, նրա տարբեր թիմակիցների եւ ըստ իրենց՝ ապօրինի հարստացածների պատժելուն:

Երրորդ խումբ, այստեղ մարդիկ էին, ովքեր պարզապէս փորձում են հասկանալ, թէ ո՞վ կամ ովքե՞ր են լուծելու իրենց սոցիալական հարցերը, ի՞նչ է ենթադրում նախագահի յայտնի հրամանագիրը եւ ի՞նչ է իրենց սպասւում:

Համոզուած եմ, որ Արցախի ներկացուցչութեան դիմաց հաւաքած եւ ակտիւութիւն/ագրեսիւութիւն դրսեւորող անձանց ճնշող մեծամասնութիւնն իր քայլի վտանգաւորութիւնը ողջ խորութեամբ չէր էլ պատկերացնում:

Պատերազմը, շրջափակումը, չդադարող ճգնաժամերը մարդկանց վրայ ծանր հոգեբանական ազդեցութիւն են թողել եւ նրանց դարձրել խիստ էմոցիոնալ:

Արցախի իշխանութիւնն այս պահին ունի մի քանի առանցքային խնդիր՝ տարբեր խողովակներով անկեղծ խօսել հասարակութեան հետ եւ յստակ բացատրել Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակը իր պատճառա-հետեւանքային կապով, ներկայացնի իր պատկերացումները Արցախի ապագայի եւ Հայաստանում գտնւող արցախցիների ճակատագրի վերաբերեալ»:

«168.am»

Մետաքսէ Յակոբեան.

«Ես վստահ եմ, որ ամէն դէպքում նպատակը Արցախի ներկայացուցչութեան փակումն էր»

Արցախի ներկայացուցչութեան դիմաց հաւաքածների մեծ մասն ուղղորդուած չէր, սակայն կազմակերպիչների նպատակը ներկայացուցչութեան թիրախաւորումն էր եւ նրա գործունէութեան դադարեցումը: Արցախի ԱԺ պատգամաւոր Մետաքսէ Յակոբեանը համոզուած է, որ ներկայացուցչութեան մօտ տեղի ունեցած անկարգութիւնները ուղղորդուած էին եւ այն ուղղորդել էին 2018 թւականից Արցախում ներդրուած յայտնի ուժերը:

«Սոցիալական ցանցերի գրառումներից արդէն ակնյայտ էր, որ իրենք պատրաստւում էին նոյն գործելաոճը իրականացնէին, ինչ-որ երեք տարի Արցախում էին իրականացնում: Այդ պառակտող խմբերը ստեղծւել են Արցախում 2018 թւականից եւ այժմ էլ իրենց գործողութիւնը չեն աւարտել: Նրանք սոցցանցերում են շատ ակտիւ, հէնց իրենք են սոցցանցերում տարածել, որ պէտք է հաւաքւել ներկայացուցչութեան դիմաց: Շատերն են ինձ զանգահարել ու ճշտել, թէ դա ինչ հաւաք է եւ իմանալով աղբիւրը, ուղղակի չգնացին: Այնտեղ շատ քիչ մասսա կար, որն ուղղորդուած էր, ուղղակի շատերը սոցիալական ցանցերով չիմանալով, չպատկերացնելով, ուղղակի եկել էին հաւատալով, որ այդտեղ հարցերի պատասխաններ են ստանալու եւ այդ հարցերը հիմնականում սոցիալական բնոյթի էին:

Բայց կրկին անգամ այդ խումբը յաջողեց, քանի որ կարողացաւ ցոյց տալ, որ թէ Հայաստանում, թէ Հայաստանից դուրս արցախցիները կարող են իրենց նման կերպ պահել եւ դրսեւորել, քանի որ բոլորի համար էլ ընդունելի չէ նման պահւածքը այս իրավիճակում»,- ասաց պատգամաւորը:

Յակոբեանի խօսքով՝ շատերը հասկանում են, որ Արցախի իշխանութիւններն էլ այն վիճակում են, որ չունեն հարցերի պատասխաններ, յատկապէս սոցիալական բնոյթի:

«Ես ինքս երկու շաբաթ է՝ փորձում եմ պարզել այդ հարցերի պատասխանները, թէ ի վերջոյ ինչ վերաբերմունք է ցուցաբերելու ՀՀ կառավարութիւնը արցախցիների նկատմամբ, հասկանալի է, որ դեռ որոշում չկայ: Այս ամէնը ձգձգւում է եւ կարող եմ ասել, որ սա էլ պատահական չէ: Այդ պատճառով որոշակի խմբեր փորձում են ծանր, կեղեքւած վիճակում գտնւող մարդկանց օգտագործել: Արդիւնքում ձերբակալւեցին մարդիկ, որոնք այս ամէնի հետ կապ չունէին, բոլորս էլ շատ լաւ գիտենք, թէ ովքեր են կազմակերպիչները»,- «News.am»-ի հետ զրոյցում նշում է նա:

Պատգամաւորը շեշտում է, որ այս իրավիճակում Արցախի իշխանութիւնները դատապարտում են կատարւածը եւ կարծում են, որ սա ընդունելի չէ ոչ մի պարագայում:

Յակոբեանը նշում է, որ ՀՀ-ում Արցախի ներկայացուցչութիւնը միակ մարմինն է, որ մնացել է, որտեղ կարող են հաւաքւել Արցախի իշխանութիւնները, որոշակի գործունէութիւն ծաւալել, հարցեր քննարկեն, փորձեն լուծումներ գտնել, սակայն այդ անկարգութիւների կազմակերպիչները պատահական չէ, եւ հէնց ներկայացուցչութիւնն են թիրախաւորել. «Ես վստահ եմ, որ ամէն դէպքում նպատակը այս ներկայացուցչութեան փակումն էր, եւ այնպէս արեցին, որ դա արցախցիների ձեռքով տեղի ունեցաւ: Նաեւ իրենց գլխաւոր նպատակներից մէկն էր հունից հանել պաշտօնեաներին, ինչքան հնարաւոր է վիրաւորելով, եւ իրենք իրենց նպատակին հասան»:

Նշենք, որ անկարգութիւնների հետ կապւած քննչական կոմիտէում յարուցւել է քրէական վարոյթ, 10 անձ ձերբակալւել է:

«News.am»

ՍԼՈՔ

ՄԵՐԺԵ՛Լ ՕՏԱՐԻՆ ԱՂԷՏԱԲԵՐ ՍՏԵՊՂԻՆՆԵՐԸ

Մարդս պէտք է զարմանալու անսահման կարողութեամբ օժտուած ըլլայ՝ իմաստ գտնելու համար Հայաստանի այսօրուան իշխանապետին ու կողքին քալողներուն (նա՛եւ Սփիւռքի մէջ) խօսքերուն եւ գործերուն մէջ: Անսպառ զարմանքէն բնականաբար բաժին կելլէ՝ անոնց խօսքերուն եւ գործերուն շռայլուած մեկնաբանութիւններուն, որոնք ճիգ կընեն կրկին ու կրկին զանգուածին աչքերն ու միտքերը բանալու, ցոյց տալու՝ թէ Հայաստանը վերջին տարիներուն կը՝ վազէ դէպի իրողական անէացում, թէ՛ իբրեւ պետութիւն, եւ թէ՛ իբրեւ հայրենիք, ա՛զգ:

Այսօր, համացանցի վրայ փնտրտուքի մը պահուն, յանկարծ դիմացս ելաւ հետեւեալ երգիծանկարը (կարելի է որակել նաեւ ողբերգանկարը):

Ընթերցողս պիտի նկատէ, որ սա բաւական հին է (1916) եւ կը պատկերէ Ա Աշխարհամարտի օրերու Եւրոպայի վիճակը: Շարժիլ մերժող յամառ իշուն քթին դիմաց ստեպղին մը կախելով՝ զայն քալել հարկադրելու մասին առակը շատ հին է: Հոս, սակայն, նկարողը տարբեր մեկնաբանութիւն մը աւելցուցած է սկզբնական, այլապէս դրական գաղափարին: Դիտողը կը տեսնէ, որ էշը շարժման մէջ դնողը – եւ բացայայտ է, որ ան ճիւաղանման արարած մըն է – չորքոտանին հասցուցած է անդունդի մը եզրին: Քանի մը քայլ եւս, եւ...

Մեզի համար ինչո՞ւ այժմէական է այս պատկերը: Պարզապէս այն պատճառով, որ Հայաստանի (ներկայացուցիչին) քամակը նստող «ազնըւասի ոտ» բարեկամները, «քեզի պատրաստ ենք օգնելու, սակայն Ադրբեջանի դէմ ՈՐԵՒԷ ՔԱՅԼ ՊԻՏԻ ՉԱՌՆԵՆՔ» շռայլողները, ստեպղինին բոյրով տարուած անբանը հասցուցած են նոր անդունդի մը եզրին: Մարդիկ, համակիր թէ ընդդիմադիր, կարծէք թէ մոռցած են, որ Հայաստան աւելի քան 3 տարիէ ի վեր կիյնայ անդունդէ անդունդ, «խաղաղութեան ստեպղին» քարոզողին վարմունքին հետեւանքով՝ Արցախի մեծ մասը կորսնցընելէ ետք, կորսնցուցած ենք ամբողջ Արցախը, հիմա բաց աչքերով ու ականջներով կը տեսնենք-կը լսենք, որ մարդուկը պատրաստ է քանի մը օրէն նոր փաստաթուղթ ստորագրելու եւ հողային նոր զիջումներ կատարելու Ադրբեջանին, երբ կրկին ու կրկին անգամ իմաստազրկած է Սահմանադրութիւնը, գերիշխանութիւնը, հայրենիքի ամբողջականութիւնը, հողին տուած՝ մեր պատմութիւնն ու փաստարկուած աշխարհագրութիւնը:



***

Դար մը առաջ, ողբացինք Ադանան, շուրջ 30 տարի առաջ՝ Գետաշէնը (մեր ողբերու պատմութիւնը հաստափոր է): Ներսէս Շնորհալի, որուն վախճանման 850-ամեակը կը նշենք այս տարի, 1144-ին, այսինքն Անիի դաւադրաբար վաճառքէն ուղիղ դար մը ետք, գրած է «Ողբ Եդեսիոյ» խորագրեալ աքանչելիք մը: Եթէ կարդանք այդ «Ողբ»-ը, չենք կրնար չտեսնել մէկ կողմէ՝ օտար ամիրայի մը ոճրային արշաւանքին, ստապատիր խոստումներով Եդեսիա մուտքին ու խոստումը դրժելով՝ քաղաքացիները կոտորելու դիպաշարին, ու միւս կողմէ Արցախի վրայ ադրբեջանական յարձակումին ու հետեւող դիպաշարին միջեւ ակներեւ նմանութիւնները: Շնորհալիի գործին մէջ, սակայն, կան մանրամասնութիւններ, որոնք է՛ապէս կը հակադրուին այսօրուան կարգ մը վիճակներուն: Եդեսիան պաշտպանողները հայրենասէր են, ոգի ի բռին կը պատեազմին յարձակողին դէմ, հոգեւորականներ ու աշխարհիկներ նոյն խրամատին մէջ են, ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵԱՆ եւ ԹՇՆԱՄԻՒՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՆՊԱՍՏՈՂԻ մասին խօսք չկայ: «Ողբ»-ը նաեւ անժամանցելի պատգամ մը ունի վերջին բաժինին մէջ. Շնորհալի կը հաւատայ, որ ազգը ի մի պիտի խմբուի, հեռացողները պիտի վերադառնան եւ սեփական բազուկով պիտի վերականգնեն քաղաքը. պատռիկ մը այդ բաժինէն.

...Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
որք այժմ յինէն էք բաժանած,
Գայք ի վերայ բարձեալ կառաց,
պալարակապ երիվարաց,
Որք ցրուեցայք յամէն կողմանց,
չորեքծագեան տիեզերաց՝
Ի գաւառաց հեթանոսաց
եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց:
Ի ես համբառնամ զաչս
ի բարձանց,
զձեզ տեսանեմ շուրջ ժողոված,
Ընդ որ խնդամ եւ ցնծացած՝
գիրկս արկանեմ եւ զւարճացած,
Եւ զտխրական զգեստ մերկացած՝
կարմիր կանաչ գոյն զգեցայց:
Եւ զպատմուճանս պատառած
փոփոխեցից նորոգ կարած...

Շնորհալիէն մինչեւ Խրիմեան Հայրիկ, մեր Ազատագրական շարժումէն մինչեւ Արցախեան շարժում (իսկ մեր ազատագրական շարժումին արմատները պէտք է՝ փնտրել 19-րդ դարու վերջերէն շա՛տ առաջ), յաճախ ողբացած ենք, այսօր ալ ողբ ունինք, սակայն չենք մոռցած, իրաւունք չունի՛նք մոռնալու պատգամներուն միւս երեսը՝ ՍԵՓԱԿԱՆ ՃԻԳՈՎ վերականգնելու եւ սեփականութիւն պահպանելու առաքելութիւնը:

***

Օտարին կողմէ մեր քթին առջեւ կախուած ստեպղինը միշտ ալ համով պատառ չէ: Պէտք է մերժել նոր գահավիժումը:

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ
19 հոկտեմբերի 2023

Տարբեր հարթակ, տարբեր ուղղութիւն

Հոկտեմբերի 15-ին Ադրբեջանի բռնապետ Իլհամ Ալիեւ այցելեց Ստեփանակերտ եւ արցախեան այլ բռնագրաւեալ շրջաններ, ուր հերթաբար կատարեց ադրբեջանական դրօշակի եւ զինանշանի ծածանում-տեղադրում: Անշուշտ ոտնակոխելով Արցախի դրօշը՝ ան շարունակեց իր յարձակողական եւ պատերազմական մթնոլորտ ստեղծող՝ սպառնալի յորդորները:

Ստեփանակերտէն հեռու, շատ տարբեր հարթակի վրայ, Եւրոխորհրդարանի մայրաքաղաք Ստրասբուրգի մէջ, բեմ բարձրացաւ ՀՀ վարչապետը եւ կարդաց իր ճառը:

Մէկը բեմ բարձրացաւ զինուորական զգեստով եւ պատերազմական մթնոլորտ ստեղծեց, ահ ու սարսափ ստեղծող խօսքեր ժայթքեցնելով, իսկ միւսը «պրոտոկոլային» պաշտօնական զգեստով եւ ոճով խօսեցաւ ժողովրդավարութեան, երջանկութեան, բարեկամութեան եւ խաղաղութեան մասին:

Հայորդիին դիտանկիւնէն՝ թէեւ լեռնային է մեր հայրենիքը, բայց յստակ էր, թէ երկու ղեկավարներուն խօսքերը կը ցոլացնէին «Չայն բարբառոյ յանապատի» ասացուածքը: Այսինքն՝ մէկը մէկ լեռան վրայ, միւսը խորացող ձորի մը մէջ...

Ինչպէ՞ս մեկնաբանել երկու ղեկավարներուն միտք բանին, որդեգրած ճանապարհին ու գործելաձեւը:

Երկու տարբեր բեւեռներ ստեղծուած են: Աշխարհագրական ակնոցով դիտուած բաղդատական մը ընելով՝ մէկը ամէն գնով ամուր կը մնայ իր սառոյցին վրայ, յաւելեալ տարածքներ սառեցնելով, իսկ միւսը արդէն իսկ պատրաստ է ամէն գնով հալեցնել մասմաս սահող սառցակոյտը, առանց անդրադառնալու կամ գիտակցելու, որ հերուկի պիտի վերածի եւ շոգիանայ սառոյցին մնացորդացն ալ՝ ամբողջ հայրենիքը, իսկ ստար զանգած մը կը նախընտրէ մնալ կրաւորական ու յանցակից դիտողի կօշիկներուն մէջ: Փաշինեան կը կարծէ, թէ հայկական ոճով «կլասնոսթ» մըն է պատահածը, որուն մասին ակնածանքով խօսեցաւ Եւրոխորհրդարանի բեմահարթակէն, ներկայացնելով եւ նկարագրելով, թէ ամէն բան վարդագոյն է, ներառեալ... ծանրացող խաւարը: Չէ՞ որ Արցախի վրայ վերջին յարձակումին օրը, ան ճակատաբաց յայտարարած էր, թէ արցախցիներ որեւէ սպառնալիքի տակ չեն, անգամ մը եւս փաստելով, որ որքա՛ն հաղորդ է իրական վիճակին: Եւ հիմա կը խօսի ադրբեջանական փոանգներու մասին, երբ Արցախի մէջ հայ չէ մնացած...

Ան յոխորտանքով եւ ինքնավստահութեամբ խօսեցաւ «թաւշեայ յեղափոխութեան» մասին, դրուատեց անոր կերտած «թափանցիկ եւ ժողովրդավար» ուղին, հմտօրէն առանց յստակացնելու, թէ իրողապէս միակուսակցական կառոյցով ստեղծուած Ազգային ժողովը «կը գործէ շարունակ ի շահ արդարութեան եւ ժողովրդավարութեան»:

Կասկած չկար, որ անոր ճառին այս – ու այլ – տողերը կարծէք թէ հասցէագրուած էին ո՛չ թէ եւրոպացի քաղաքական մարդոց, այլ հայաստանաբնակ համակիրներուն. կարծէք թէ ընտրապայքարի բեկոր մըն էր հրամցրուածը: Ապա 44-օրեայ պատերազմին մասին հպանցիկ տեղեկութիւն մը եւ ի վերջոյ արցախահայութեան

(Շար. 6-րդ էջում)

Արման Թաթոյեանը բացայայտում է Ադրբեջանի նոր նախագիծը ՀՀ տարածքի դէմ

Բացառիկ փաստեր Արցախում Ադրբեջանի ագրեսիայի, էթնիկ զտումների

Հոկտեմբերի 20-ին՝ սեպտեմբերի 19-ից-20-ի ադրբեջանական զինուած յարձակումների, զինուած առաջխաղացումների ուղղութիւնների եւ բնակավայրերը թիրախաւորելու, դրանք իրարից դիտաւորութեամբ մեկուսացնելու, ադրբեջանական մեխանիզմի վերաբերեալ բացառիկ փաստեր հրաւիրած ասուլիսի ժամանակ ներկայացրեց Իրաւունքի եւ արդարութեան կենտրոն «Թաթոյեան» հիմնադրամի տնօրէն Արման Թաթոյեանը: Այս փաստերը սեպտեմբերի 19-ից սկսած՝ հաւաքագրել է հիմնադրամը: Փաստերով հիմնաւորուեց արցախահայերի բռնի տեղահանումը: Ներկայացուցին ապացոյցներ, որոնք հաստատում են ադրբեջանական էթնիկ զտումները՝ շարունակուող ցեղասպան քաղաքականութեան պայմաններում: Ասուլիսի ընթացքում անդրադարձ եղաւ նաեւ հայկական էթնիկ ինքնութեան դէմ Ադրբեջանի իշխանութեան կեղծ հայեցակարգերին, որոնք ներկայումս առաւել ակտիւացել են:

Արման Թաթոյեանը նախ ասաց, որ Արցախի դէմ յարձակումը սկսել է 4 հիմնական ուղղութիւններով՝ Մարտակերտ, Ասկերան, Մարտունի, Ստեփանակերտ, ապա մանրամասներ յայտնեց՝ ըստ առանձին ուղղութիւնների:

«Մարտակերտի շրջանի ուղղութեամբ յարձակումը եղել է 3 հիմնական ուղղութիւններով: 1-ին ուղղութիւնը՝ Չարեքթար-Գետաւան-Դրմբոնի հանք: 2-րդ ուղղութիւնը՝ Նարեշտար-Վանք-Առաջաձոր-Խաչէնի մոստ: 3.1. Ուղղութիւնը՝ դէպի Վարդաձոր, Կաշէնի հանք, որի արդիւնքում փակել են նաեւ այդ կողմից: 3.2. ուղղութիւնը՝ դէպի Մարտակերտ քաղաք: Արդիւնքում Մարտակերտի շրջանը բլոկադայի մէջ է յայտնուել, ադրբեջանցիները շրջանը բաժանել են 3 մասի իրենց գործողութիւններով եւ վերցրել բլոկադայի մէջ եւ շրջանից դուրս գալու երկու ճանապարհների՝ Դրմբոնի եւ Խաչէնի մոտ անցակէտեր դրել»,- ասաց Արման Թաթոյեանը:

«Թաթոյեան» հիմնադրամի տնօրէնի խօսքով՝ այս գործողութիւնների արդիւնքում թշնամին թիրախաւորելով քաղաքացիական ենթակառուցուածքները եւ բնակավայրերը՝ իր վերահսկողութեան տակ է վերցրել Թարթառ գետի վրայ կառուցած Մարսանգի ջրամբարի վրայ գտնուող 3 փոքր Ջրէկ եւ 1 մեծ Ջրէկ, ինչպէս նաեւ Հաթերքի ուղղութեամբ Թրղէ գետի վրայ կառուցած եւս 2 Ջրէկ՝ Թրղէ 1 եւ Թրղէ 2 անուանումներով:

«Մարտակերտի շրջանում բնակուել է 14-15.000 բնակչութիւն, Մարտակերտ քաղաքում 4000 բնակիչ է եղել, Վանք գիւղում 1400-1500 բնակիչ է եղել՝ շուրջ 400 տնտեսութեամբ: Մարտակերտի շրջանի բնակչութեան դուրս գալու միակ հնարաւորութիւնը Խաչէնի մոստն էր, որտեղ

(Շար. 6-րդ էջում)

Արցախցիները չպէտք է սփիւռքահայ դառնան

Արցախցիների բռնի տեղահանութեան առաջին իսկ օրից աշխարհի տարբեր ծայրերից Հայաստան ժամանեցին ՀՕՄ-ի տարբեր կառոյցների պատասխանատուներ, ատենապետեր եւ բռնի տեղահանուածներին հէնց Գորիս քաղաքում սկսեցին ցուցաբերել առաջին հումանիտար օգնութիւնը: Այս օրերին նրանք շարունակում են Հայաստանում իրենց գործունէութիւնը ծաւալել՝ Արցախի ՀՕՄ-ուհիների հետ համագործակցելով եւ օգնութիւն ցուցաբերելով ոչ միայն մայրաքաղաքի ՀՕՄ-ի գրասենեակում, այլեւ մարզերում:

ՀՕՄ-ի Արեւմտեան Շրջանի Շրջանային վարչութեան ատենապետուհի Վիքի Մարաշլեանը ցաւով է արձանագրում, որ Արցախից բռնագաղթածները հոգեկան շատ ծանր վիճակում են գտնուում, եւ ժամանակ ու հոգեբանական աջակցութիւն է անհրաժեշտ, որ նրանք դուրս գան այդ հոգեվիճակից: Իսկ մինչ այդ ՀՕՄ-ի գրասենեակներում մարդիկ հաշուառում են, ներկայացնում իրենց սոցիալական կարիքները եւ ստանում համապատասխան օժանդակութիւն:

«Առաջնահերթ պէտք է լուծենք նրանց կեցութեան, առաջին կենսական խնդիրները, յետոյ կանցնենք հոգեբանական աջակցութեանը, աւելի խորքային լուծումներ գտնելու նրանց խնդիրներին».- «Սփիւռքի ձայնի» եթերում ասում է տիկին Մարաշլեանը, ում պատասխանատուութեան տակ գտնուող Արեւմտեան թեւը արդէն հանգանակել է 150 հազար ԱՄՆ դոլար: Ատենապետուհին համոզուած է, որ գալու է մի օր, երբ բոլոր արցախցիները վերադառնալու են իրենց տները.«Իսկ մենք ամէն ինչ անելու ենք, որ նրանք չհեռանան նաեւ Հայաստանից, մնան այստեղ, չհամալրեն սփիւռքահայերի շարքերը: Իրենք չեն ուզում հեռանալ, բայց չհեռանալու համար անհրաժեշտ պայմաններ են պէտք: Մենք՝ Սփիւռքը, Հայաստանը, պէտք է ամէն ինչ անենք, որ այս մարդիկ մնան Հայաստանում»:

«Arfd.am»

«Գոհար» միջնակարգ դպրոցի աշակերտի յաջողութիւնը

Ուրախութեամբ տեղեկացանք, որ «Գոհար» դպրոցի 2022-2023 տարեշրջանի 12-րդ դասարանի աշակերտ Դաւիթ Գրիգորեանը ընդունուել է «Շարիֆ» արդիւնաբերական համալսարանի «Նիւթերի ճարտարագիտութիւն եւ մետալուրգիա» բաժինը (دانشگاه صنعتی شریف رشته مهندسی علم مواد و متالورژی), ինչի առիթով էլ հոկտեմբերի 16-ին աշակերտութեան ներկայութեամբ նա դպրոցում գնահատուեց:

Հարկ ենք համարում նշել, որ Դաւիթը միջնակարգ Ա շրջանում մէկ տարուայ ընթացքում է անցել 8-րդ եւ 9-րդ դասարանները:

«Գոհար» դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի անունից շնորհաւորում ենք սիրելի Դաւիթ Գրիգորեանին եւ մաղթում՝ կանաչ ճանապարհ ու նորանոր յաջողութիւններ կեանքի բոլոր ասպարէզներում:

«Գոհար» դպրոցի տեսչութիւն

Ատրպատականի պատմական վանքերի յանձնախմբի նիւթա-բարոյական զեկոյց-հանդիպում՝ Թեմական խորհրդի հետ

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ– *Հոկտեմբերի 17-ին, Ատրպատականի հայոց թեմի պատմական վանքերի Ուխտագընացութեան գործադիր յանձնախմբի անդամները ներկայացան Թեմական խորհրդին, Ս. Թադէի վանքի անցնող եռօրեայ ուխտագընացութեան իրենց կատարած աշխատանքի նիւթա-բարոյական զեկոյցը ներկայացնելու:*

Նիստը նախագահեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանը: Յանձնախմբից ներկայ էին՝ Գագիկ Յարութիւնեանը, Վարդան եւ Սեւան Ենովքեանները եւ Թադէ Կարապետեանը: Նիստից բացակայում էին յանձնախմբի վաստակաշատ անդամներ՝ Ազատ Մատթէոսեանը եւ Ռազմիկ Օրդուխանեանը:

Թեմական խորհուրդը իր ամբողջ կազմով ներկայ էր, գլխաւորութեամբ ատենապետ Գագիկ Ջորջեանի, եւ մասնակցութեամբ Ալէն Սայեադեանի, Վարդան Կարապետեանի, Հենրիկ Աբրահամեանի եւ Քաթրին Դիլանեանի:

Սրբազան Հայրը ողջունելով բոլորին, վերյիշեցում կատարեց անցնող յուլիսի 20-22-ին տեղի ունեցած եռօրեայ ուխտագնացութեան դէպի Ս. Թադէոս Առաքեալի վանք: Նա բացառիկ համարեց այս տարուայ Ուխտագնացութիւնը, առաջին հերթին իւրայատուկ կազմակերպւածութեան համար, որով ոչ մի անախորժ միջադէպ տեղի չէր ունեցել ուխտաւորների շարքերում, որը այնքան սովորական երեւոյթ էր նախորդ տարիներին: Բոլոր ուխտաւորների գոհունակ ժպիտը, ուրախութիւնը եւ հաւատաւոր մօտեցումը ուխտագնացութեանը, Սրբազան Հայրը վերագրեց յանձնախմբի նուիրեալ աշխատանքին եւ Թեմական խորհրդի բծախնդիր հովանաւորութեանը. «Հակառակ փոքրաթիւ լինելուն, յանձնախմբի անդամները բացառիկ պատուով դուրս եկան, մեր թեմի կեանքի տարեկան բարձրակէտը հանդիսացող այս ուխտագնացութեան կազմակերպման աշխատանքի տակից, նոր մրցանիշ արձանագրելով դրա պատմութեան մէջ: Թեմական խորհուրդը եւս, իր պետական բարձրամակարդակ եւ ազնիւ յարաբերութիւններով մեծ վստահութիւն շահած, կարողացաւ յանձնախմբի աշխատանքները հովանաւորել եւ մօտկից հետեւել դրա գործունէութեան», - ասաց Սրբազան Հայրը:

Յանձնախմբի անունից նիւթա-բարոյական զեկոյց ներկայացրեց Գագիկ Յարութիւնեանը: Մանրամասն զեկոյցում նշած էին նախապատրաստական այն աշխատանքները, որոնք հակառակ շատ ուշ սկսելուն, յաջողութեամբ էին աւարտել: Նիւթական զեկոյցի պատկերը եւս ներկայացնելով, յանձնախումբը իր առաջիկայ ծրագրերը ներկայացրեց Թեմական խորհրդին, յաջորդ Ուխտագընացութեան նախապատրաստական աշխատանքները աւելի շուտ սկսելու անհրաժեշտութիւնը ընդգծելով:

Թեմական խորհրդի ատենապետ Գագիկ Ջորջեանը, ինչպէս նաեւ միւս անդամները իրենց գնահատանքը յայտնեցին յանձնախմբի անդամներին, նշելով, որ շուտով նոր նշանակումներ կը լինի, բազմացնելու համար կազմը եւ թեթեւացնելու դրա վրայ ծանրացած աշխատանքային դժւարին բեռը:

Թեմական խորհուրդը նաեւ յայտնեց Վանքում առաջնորդարանի տրամադրութեան ներքոյ գտնուող խուցերի վերանորոգման աշխատանքի շարունակման անհրաժեշտութիւնը, մատնանշելով, որ ցարդ վերանորոգուած խուցերը, որոնք տասնամեակներ շարունակ լքուած վիճակում էին գտնուում, մեծապէս փոփոխութեան էին ենթարկել Վանքի տարածքում յանձնախմբի գործունէական պատկերը, Մշակութային Ժառանգութեան հիմնարկի եւ Չալդրանի կուսակալութեան մօտ:

Թեմական խորհուրդը այս առիթով գնահատանք արձանագրեց այն բոլոր մարմիններին՝ սարկաւագաց եւ դպրաց դասերին, «Կոմիտաս» քառաձայն երգչախմբին, Թաւրիզի եկեղեցիների Կանանց խնամակալ մարմնին, «Տաթեւ» եւ «Ակունք» պարախմբերին, եւ յատկապէս կարգապահների կազմին, ինչպէս նաեւ Իրանի Եկեղեցիների Պահպանութեան հիմնարկութիւն՝ գլխաւորութեամբ դոկտ. Շերլի Աւետեանն, որոնք ժամացուցային ճշգրտութեամբ իրենց աշխատանքն էին կատարել, բարձր պահելով Ատրպատականի թեմի պատկերը, Իրանից եւ արտասահմանից ժամանած բոլոր ուխտաւորների առջեւ:

Վերջապէս, Սրբազան Հայրը խոր գոհունակութիւնը յայտնեց յանձնախմբի կանոնագրային հետեւողութեամբ աշխատանքի համար, որը շատ աւելի էր հեշտացրել դրա գործունէութիւնը:

Նշենք, որ հոկտեմբերի 28-ին, աւանդական դարձած թէյասեղանով, Թաւրիզի «Համազասպ Ոսկանեան» սրահում գնահատելու են բոլոր նուիրեալ աշխատողները:

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Սպասարկման սեղան» խորագրով առաջին ժողովրդական հանդիպումը

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, այսուհետեւ ճշտուած պարբերականութեամբ (իւրաքանչիւր ամսւայ 3-րդ չորեքշաբթի օրը) իրականացելու են «Սպասարկման սեղան» խորագրով ժողովրդական հանդիպումներ, որտեղ թեմի գաւակները առիթ են ունենալու իրենց խնդրանքները, տեսակէտներն ու առաջարկները դէմ առ դէմ, անհատապէս փոխանցելու՝ ազգային մարմինների անդամներին՝ փոխադարձաբար նրանցից ստանալով դրանց լուծման կամ իրականացման համար խոստում եւ ուղղութիւն:

Վերոնշեալ հանդիպումների շարանի մեկնարկը տրուեց չորեքշաբթի՝ հոկտեմբերի 18-ի երեկոյեան, Նոր Ջուղայի առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքում, որտեղ Թեմական խորհրդի անդամներ՝ ատենապետ Վարուժ Մինասեանը, Նարբէ Ջարդն Դաւուդը եւ Տարօն Տէր-Մարտիրոսեանը, Բարեսիրական մարմնի ատենապետ Կարօ Յովսէփեանը, Կրթական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը, Կալուածա-տնտեսական մարմնի ատենապետ Ռաֆֆի Խուդավերդեանը, Գերեզմանատան բարեզարդման մարմնի ատենապետ Էդիկ Ղազարեանը եւ Ուսանողական կրթաթոշակների հոգաբարձութեան ատենապետ ու միեւնոյն ժամանակ Թեմական խորհրդի անդամ Ռայեա Խուդավերդեանը ունկընդրեցին դիմորդների խնդրանքները, դժւարութիւնները եւ իհարկէ տեսակէտներն ու առաջարկները:

Հանդիպումներին մասնակցած եօթ դիմորդները, ովքեր նախապէս հերթագրուել էին Թեմական խորհրդի յայտարարութեան համաձայն, իրենց առաջարկներն ու ակնկալիքները արծարծեցին բնակարանային խնդիրների լուծման, մշակութային կենտրոնի հիմնադրման, Բոլորան հայաբնակ գիւղի բնակիչների կալւածների եւ մի շարք այլ հարցերի շուրջ:

Ազգային մարմինների ներկայացուցիչները լսելով իւրաքանչիւր դիմորդին՝ քննարկեցին պարագան եւ խնդրանքների իրականացման ու խնդիրների լուծման համար իրենց տեսակէտներն՝ ու որոշումները արձանագրեցին՝ համապատասխան ժամկէտներ նկատի առնելով:

Թղթակից (Նոր Ջուղա)

Եթէ դէպի Հայաստան եկող գումարների շարժը դադարի, ապա մեր երկրի տնտեսական աճը մէկ օրում կանհետանայ

Նիկոլ Փաշինեանն, հոկտեմբերի 12-ին կայացած կառավարութեան հերթական նիստի ժամանակ, խօսելով Հայաստանի տնտեսական առկայ իրավիճակի մասին, յայտարարեց, թէ Հայաստանի կառավարութիւնը կարողանում է կառավարել ճգնաժամերը:

«Ուզում եմ գոհունակութեամբ արձանագրել, որ Հայաստանը, ի հեճուկս բոլոր բարդութիւնների, շարունակում է մնալ բարձր տնտեսական աճի տիրոյթում: Բոլոր կանխատեսումների համաձայն՝ 2023 թւականին նոյնպէս ՀՀ-ն կունենայ տնտեսական բարձր աճ»,- յայտարարեց Փաշինեանը՝ յաւելելով, որ յաջորդ տարւայ համար եւս նախատեսում են 7 տոկոս աճ գրանցել:

ՀՅԴ Բիւրոյի տնտեսական հետազօտութիւնների գրասենեակի պատասխանատու, տնտեսագէտ Սուրէն Պարսեանը «168.am»-ի հետ զրոյցում համոզմունք յայտնեց, որ այդ տնտեսական աճի գրանցման գործում կառավարութեան գործօնը չնչին է: Նրա խօսքով՝ չնայած ներկայ կառավարութիւնն իրեն է վերագրում բոլոր բարձր ցուցանիշերը, սակայն այդ տնտեսական ակտիւութիւնը ժամանակաւոր է եւ պայմանաւորուած է հիմնականում արտաքին գործօններով:

«Ռուս-ուկրաինական հակամարտութեան արդիւնքում Հայաստան տեղափոխուած ռուս ռեզիդանտները բաւականին մեծ աշխուժութիւն առաջացրին մեր երկրի տնտեսական շուկայում: Նրանք իրենց հետ բերեցին ո՛չ միայն իրենց աշխատանքը, այլեւ իրենց խնայողութիւնները: Միայն անցած տարի 3.6 մլրդ. դոլարի խնայողութիւն է մտել մեր երկիր: Այս տարի էլ շարունակում է Ռուսաստանից Հայաստան գումարների հոսքը, ինչը խթանել է Հայաստանի ծառայութեան ու առեւտրի ոլորտների զարգացումը»,- մանրամասնեց Սուրէն Պարսեանը:

Տնտեսագէտի գնահատմամբ՝ ֆինանսաբանկային համակարգը նոյնպէս բաւականին լուրջ աճ է գրանցել՝ հէնց այդ նոյն հանգամանքների արդիւնքում:

«Օրինակ՝ 2022 թւականին աճը կազմել է 50 տոկոս: Այս տարի էլ այդ աճը շարունակւում է: Բացի այդ երկու ոլորտներից՝ Հայաստանն ունի նաեւ տնտեսութեան հիմնական շարժիչ՝ շինարարութեան ոլորտը: Միայն յունուար-օգոստոս ամիսներին այս ոլորտում 13.3 տոկոս աճել է շինարարութիւնը, առեւտուրն աճել է 23.1 տոկոս, ծառայութիւնները՝ 14.8 տոկոսով: Ընդհանուր յունուար-օգոստոսին տնտեսական ակտիւութիւնը կազմել է 10.4 տոկոս»,- ասաց նա:

Միեւնոյն ժամանակ, այդ ամենի ֆոնին, տնտեսագէտը մատնանշում է ներքին գործօնների արդիւնքում Հայաստանում առաջացած անկումային ցուցանիշերը: Այս առումով՝ մատնանշում է յատկապէս արդիւնաբերական ոլորտը, որտեղ մեր երկիրն արդէն երրորդ ամիսն է, ինչ անկում է գրանցում:

«Յունուար-օգոստոս ամիսների հաշուարկով արդիւնաբերութեան ոլորտի անկումը կազմում է 0.1 տոկոսի չափով: Իսկ օգոստոսի նկատմամբ անկումը կազմում է 3.8 տոկոս: Հիմնական անկում է գրանցել հանքարդիւնաբերութեան, սննդի վերամշակման ու նաեւ որոշակի խմիչքների արտադրութեան ոլորտներում»,- տեղեկացրեց տնտեսագէտը՝ համոզմունք յայտնելով, որ երկարատեւ տնտեսական աճ գրանցելու համար պէտք է բաւարար աշխատանք իրականացի՝ գիւղատնտեսութեան ու արդիւնաբերութեան ոլորտների զարգացման ուղղութեամբ:

Այս համատեքստում, «168.am»-ի զրուցակիցը գիւղատնտեսութեան ոլորտում արձանագրեց գրեթէ զրոյական վիճակ, ինչը, ըստ նրա, վկայում է, որ այդ ուղղութեամբ որեւէ աշխատանք չի իրականացւում:

Որպէս յաւելում, Սուրէն Պարսեանը յստակեցրեց, որ գործող կառավարութեան ներկայացուող ցուցանիշերը Հայաստանի ներքին ներուժի հետ որեւէ կապ չունեն: Նրա խօսքով՝ եթէ դէպի Հայաստան եկող գումարների շարժը հետագայում դադարի, ապա մեր երկրի տնտեսական աճը մէկ օրում պարզապէս կանհետանայ:

«Կառավարութիւնը պէտք է ստանձնի ամբողջ պատասխանատուութիւնը, որպէսզի այդ հոսքերը չդադարեն: Դադարի դէպքում մենք շատ լուրջ տնտեսական անկում ենք ունենալու, ինչպիսին եղաւ, օրինակ՝ 2009 թւականին, երբ ի հաշիւ շինարարութեան կտրուկ անկման, դէպի Հայաստան ներդրումները նւազեցին, ու մեր տնտեսութիւնը 14.4 տոկոս անկում գրանցեց»,- յիշեց տնտեսագէտը՝ յաւելելով, որ Հայաստանում առկայ եւ օրէցօր աւելացող անվտանգային խնդիրները հեռանկարներ չեն ստեղծում նաեւ երկարաժամկէտ ներդրումների համար: Դրա ամենակնառու ցուցիչն էլ, ըստ մեր զրուցակցի, այն է, որ այս պահին էլ մի շարք ներդրումային ծրագրեր սառեցուած են:

Սուրէն Պարսեանը համոզմունք յայտնեց, որ մեր երկրում դեռեւս առկայ այս դրական ցուցանիշերը հնարաւոր կը լինի պահպանել միայն ապագայում հնարաւոր ռիսկերը նւազեցնելու քաղաքականութեան մշակման արդիւնքում:

«Յաւօք, պէտք է նշեմ, որ կառավարութեան կողմից այդ քայլերն այս պահին չեն երեւում: Նրանք յայտարարում են, թէ երկարաժամկէտ տնտեսական աճի համար փորձում են արդիւնաբերութիւն զարգացնել, բայց իրականում այդ ոլորտում ունենք ճիշտ հակառակ ցուցանիշեր: Նիկոլ Փաշինեանը պէտք է նաեւ հասկանայ, որ արցախցիների՝ Հայաստան գալով բաւականին լուրջ հումանիտար ու սոցիալական խնդիրներ պէտք է լուծուեն: Եթէ կառավարութիւնը չկարողանայ զուգահեռ աւելացնել արտադրական, մասնաւորապէս՝ գիւղմթերքի ու մի շարք այլ ապրանքների արտադրութիւնը, ապա մեր ներքին շուկայում կարող ենք ունենալ նաեւ գնաճ»,- ասաց նա՝ յատուկ շեշտելով, որ կառավարութեան գործը ո՛չ միայն արցախցիներին գումար տրամադրելն է, այլեւ նպաստել բնակավայրի ու նրանց զբաղուածութեան հարցերով:

Ինչ վերաբերում է յաջորդ տարւայ համար կառավարութեան կանխատեսած 7 տոկոս տընտեսական աճին, տնտեսագէտն արձանագրեց, որ այս տարւայ յունուար-օգոստոս ամիսներին մենք մօտաւորապէս 10 տոկոս աճ ենք գրանցել, ուստի շատ հաւանական համարեց նաեւ 7 եւ աւելի տոկոս աճի տարբերակը: Այդուհանդերձ, նրա խօսքով, այս դէպքում կարեւորը ոչ թէ ցուցանիշի չափն է, այլ որակը:

«Մենք տեսնում ենք, որ այս աճից շատ քիչ թով մարդիկ են օգտւում: Կառավարութիւնը պէտք է հասկանայ դա ու շեշտն առաւելապէս դնի մարդկանց կենսամակարդակի բարձրացման, աշխատատեղերի ու բարձր արտադրողականութիւն ապահովող աշխատատեղերի ստեղծման եւ նաեւ ներդրումների վրայ: Այս ամենի մէջ ամենակարեւորը, իհարկէ, հէնց անվտանգային խնդիրն է: Մի երկիր, որը չի կարողանում լուծել իր անվտանգութեան հետ կապած հարցերը, չի կարող ակնկալել երկարատեւ ներդրում եւ իրականացնել տնտեսական, սոցիալական արդիւնաւէտ քաղաքականութիւն»,- ասաց նա:

Ըստ տնտեսագէտի, խնդրայարոյց իրավիճակում է նաեւ բնակարանաշինութեան ոլորտը: Նրա կանխատեսմամբ՝ առկայ իրավիճակի շարունակութեան դէպքում՝ այստեղ նոյնպէս կըտրուկ անկում կարող ենք ունենալ, քանի որ բնակարանները չեն վաճառւում:

«168.am»-ը հետաքրքրուեց նաեւ, թէ մեր երկրի տնտեսութիւնն ինչ հետեւանքներ կը կրի Ռուսաստանի կողմից հնարաւոր սանկցիաների կիրառման պարագայում.

«Մեր երկրի արտահանման մօտաւորապէս 52 տոկոսը բաժին է ընկնում Ռուսաստանին: Այս թւում մեծ բաժին է կազմում նաեւ վերարտահանումը: Այսինքն, այն ապրանքները, որոնք Ռուսաստանը չի կարողանում գնել դրսից՝ դա անում է Հայաստանի միջոցով: Նաեւ, եւ՛ ՌԴ-ն, եւ՛ ՀՀ-ն ԵԱՏՄ երկրներ են, եւ նրանց առեւտրատնտեսական յարաբերութիւնները կարգաւորւում են այդ շրջանակներում: Սա նշանակում է, որ Հայաստանի նկատմամբ սանկցիա կիրառելու դէպքում ՌԴ-ն նոյնպէս կարող է տուժել: Այնպէս որ, կարծում եմ, որ այս առումով ՌԴ-ն իր քայլերը կիրականացնի առաւելագոյնս կշռադատուած ու չգնալով առեւտրատնտեսական յարաբերութիւններով որեւէ մեծ ցնցման»,- ասաց տնտեսագէտը՝ յաւելելով, որ այդուհանդերձ, Ռուսաստանն արդէն իսկ մի քանի անգամ կիրառել է սանկցիաներ՝ այս տարւայ ապրիլին՝ Հայաստանից կաթնամթերքի եւ հետագայում նաեւ՝ կոնեակի արտահանման հարցում:

«Arfd.am»

Արթուր Եղիազարեան.

«Խաղաղ» մեքենաներով «Զանգեզուր» մտնելը նշանակում է՝ ճնշում են գործադրելու ՀՀ-ի վրայ եւ առանց պատերազմի ստանալու ցանկացածը»

Հոկտեմբերի 17-ին Եւրոխորհրդարանում իր ելոյթի ժամանակ Նիկոլ Փաշինեանը, մասնաւորապէս, յայտարարել է.

«Մենք պատրաստ ենք զօրքերի հայելային յետքաշման՝ 1991 թւականի սահմանների գծից, ինչը կը նշանակի, որ Ադրբեջանը Հայաստանի ոչ մի տարածքում զօրք չի ունենայ, Հայաստանն էլ՝ Ադրբեջանի»:

Ի՞նչ է սա ենթադրում, ի՞նչ ռիսկեր ու վտանգներ է այս յայտարարութիւնը պարունակում, ՀՀ տարածքի ո՞ր ուղղութեանն է սա վերաբերում՝ Տաւուշի՞ն, նախիջեւանեան թեւի՞ն՝ Երասխի՞ն, թէ՞ երկուսը միասին, եւ արդեօք բանակի դերը նման յայտարարութիւններով եւ քայլերով չի նւազեցւում:

Այս եւ այլ հարցերի շուրջ «168.am»-ը զրուցել է ռազմական վերլուծաբան Արթուր Եղիազարեանի հետ:

- Եւրոխորհրդարանում Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնն անհասկանալի է, երբ նա կարծես խօսում է ՀՀ-ի եւ Ադրբեջանի փոխարէն: Եթէ ինքը պատրաստ է, իր խօսքերով, 1991 թւականի սահմանների գծից զօրքերը յետ քաշել, ապա ոչ մի տեղ չենք տեսել, որ Ադրբեջանը նման ցանկութիւն յայտնի, որ պատրաստ է նման գործողութիւնների: Եւ քանի որ ընդհանրական է նշել, չենք կարող ասել, որ այդ յայտարարութիւնը վերաբերում է միայն Տաւուշին, Երասխին եւ այլն:

- Իհարկէ, եղել են առիթներ, որ զօրքերի հայելային յետքաշումից խօսելով՝ Փաշինեանը նշել է Տաւուշի հատուածը, Երասխի հատուածը, ըստ այդմ, այո, մէկ ուղղութիւն չէ, որ այն ենթադրում է: Եղել են նաեւ առանց կոնկրետացումների յայտարարութիւններ, որոնց մասին կարող ենք դարձեալ ենթադրութիւններ անել: Օրինակ, դեռ 2 տարի առաջ Փաշինեանը յայտարարել էր, որ «կան Սովետական Ադրբեջանին պատկանած տարածքներ, որոնք գտնւում են ՀՀ Զինւած ուժերի վերահսկողութեան տակ, որ դեռեւս 1990-ականներից կան մարտական դիրքեր, որոնք գտնւում են ՀՀ տարածքում»:

- Չգիտեմ՝ կա՞յ նման տարածք, թէ՞ ոչ, բայց զարմանալին այն է, որ Նիկոլ Փաշինեանը չի խօսում 2021-ից Հայաստան մտած ադրբեջանական զօրքի մասին, որոնք օկուպացրել են մօտ 150 քկմ. տարածք, բայց խօսում է ինչ-որ տարածքներից, որոնք պատկանում են Ադրբեջանին, եւ իբր հայկական զօրք կայ այնտեղ: Ինչ վերաբերում է բանակի կամ ՀՀ ԶՈՒ դերի նւազմանը, ապա բանակի դերն իրականում կարող է նւազել, երբ մենք իրապէս շրջապատուած լինենք խաղաղասէր հարեւաններով, որոնք ոչ մի յաւակնութիւն, նկրտում չեն ունենայ մեր հանդէպ: Յաւօք, մենք եւրոպական պետութիւնների դիրքը չունենք եւ նոյնպիսի յարաբերութիւններ չունենք մեր հարեւանների հետ: Առնւազն երկու հարեւանի հետ մենք ունենք խնդիրներ, աւելի ճիշտ՝ այդ հարեւանները տարածքային յաւակնութիւններ ունեն մեր երկրի հանդէպ: Բազմիցս լսում ենք «Զանգեզուրի միջանցք»-ի, Նախիջեւան-Ադրբեջան ցամաքային կապ ստեղծելու եւ այլնի մասին: Այնպէս որ՝ Ադրբեջանն ու Թուրքիան այսօր ոչ թէ հարեւաններ են, այլ մեր նկատմամբ թշնամական տրամադրուած պետութիւններ, որոնք յաւակնում են ՀՀ ինքնիշխան տարածքին: Եթէ ապագայում այնպիսի իրավիճակ լինի, որ լինեն իրապէս բարիդրացիական յարաբերութիւններ, առանց որեւէ վտանգների, միայն այդ ժամանակ կարող է բանակի դերը նւազել: Իսկ մնացած դէպքերում, մեղմ ասած, անմտութիւն է, երբ գիտես, որ քո հանդէպ ագրեսիւ տրամադրուածութիւն ունեցող երկրներ են հարեւանները, եւ այդ վտանգի մասին անգամ ՀՀ իշխանութիւններն են յայտարարում, ու այսքանից յետոյ նւազեցնել բանակի դերը, նշանակում է՝ գնալ ինքնակործանման:

– Եւրոխորհրդարանում Փաշինեանի՝ զօրքերի դուրսբերման մասին յայտարարութիւնն արդեօք Ադրբեջանին յարձակման առիթ չի՞ տալիս, նման մեսիջ չէ՞:

- Այո, Փաշինեանի յայտարարութիւնը նման հնարաւորութիւն տալիս են Ադրբեջանին, յատկապէս, երբ «անկլաւների» հետ կապած արդէն լեգիտիմ հիմք տրւել է նրանց, մենք գիտենք, թէ դրանք, այսպէս ասած, ինչպէս են առաջացել: Եւ երբ հիմա Փաշինեանը դա դիտարկում է՝ որպէս Ադրբեջանի տարածք, ռազմական ճանապարհով դրանք վերցնելու հնարաւորութիւն է տալիս Ադրբեջանին:

- Ի դէպ, Ալիեւը յայտարարել է, որ «Զանգեզուր» մտնելու են խաղաղ ճանապարհով՝ ոչ թէ տանկերով, այլ մարդատար մեքենաներով, ինչ է սա նշանակում, եւ սա ինչ տեսակի կամ չափի վտանգի մասին է յուշում:

- Ես չեմ կարող ասել, թէ Ալիեւը սրա տակ ինչ է նկատի ունեցել, բայց պատմութիւնից պէտք է դասեր քաղենք, որ թուրքի ոչ մի խօսքի չպէտք է հաւատալ, որովհետեւ ոչ միայն դրժում են խոստումը, այլեւ հային խաբելը հերոսութիւն եւ պատւաբեր են համարում: Ամէն դէպքում, եթէ փորձենք բացել Ալիեւի ասածի ենթատեքստը, որ ոչ թէ տանկերով են մտնելու, այլ «խաղաղ» մեքենաներով, ապա սա նշանակում է՝ նախապէս ճնշում են գործադրելու ՀՀ-ի վրայ, որ առանց պատերազմի ստանան իրենց ցանկացածը, օրինակ, ադրբեջանցիների վերադարձ ՀՀ տարածք, կարող են նաեւ այլ պահանջներ լինել: Այսինքն, այդ «խաղաղ» մեքենաներով մտնել ասւածը ենթադրում է շանտաժ: Սա, ըստ էութեան, նաեւ վիրաւորական է այն առումով, որ Ալիեւն ասում է՝ ես ինչ ուզեմ՝ կը ստանամ, եւ անգամ ռազմական ճանապարհով խնդիրը լուծելու կարիք չի լինի:

- Հոկտեմբերի 22-25-ը թուրք-ադրբեջանական մարտավարական համատեղ զօրավարժութիւններ են անցկացւելու մի քանի ուղղութիւններով ու վայրերում, այդ թւում՝ Բաքւում, Նախիջեւանում եւ Ադրբեջանի վերահսկողութեանն անցած տարածքներում, ինչ մեսիջ է սա մեկ ուղղած:

- Թուրքիան եւ Ադրբեջանը գործում են շատ փոխկապակցւած, ինչի վկայութիւնը նաեւ իրենց զօրավարժութիւններն են: 2020 թ. 44-օրեայ պատերազմից առաջ եւս թուրք-ադրբեջանական զօրավարժութիւններ անցկացուեցին տարբեր բնոյթի եւ թեմատիկայի, այդ թւում՝ մարտեր լեռնային պայմաններում, ինչը ցոյց էր տալիս, որ որպէս հակառակորդ տարածք՝ դիտարկում էին հայկական պետութիւնների տարածքները, ինչը եւ տեղի ունեցաւ: Չմոռանանք, որ նրանց զօրավարժութիւնների ժամանակ մասնակիցները կրում են շեւրոններ, որտեղ Թուրքիան եւ Ադրբեջանը ցամաքով կապւած են իրար հետ, եւ Սիւնիքը ներառուած է իրենց պետութեան կազմի մէջ՝ Ադրբեջանի կամ Թուրքիայի: Այսինքն, Ադրբեջանը եւ Թուրքիան մէկ գոյնով է ցոյց տրւում՝ Սիւնիքը ներառուած այդ կազմի մէջ:

(Շար. 6-րդ էջում)

Արցախցի փրկարարի պատմութիւնն ու իր տեսած ողբերգութիւնը

«Կային դիակներ՝ հալած ու իրար կպած»

Աւանէսեանների ընտանիքն Արցախը լքած վերջին ընտանիքներից է: Ընտանիքի հայրը՝ Սաշա Աւանէսեանը հրշէջ-փրկարար է, սեպտեմբերի 28-ին նա 2 որդիներին ծնողների հետ ուղարկել է Հայաստան, ինքը կնոջ եւ մանկահասակ դստեր հետ մնացել է Ստեփանակերտում որպէսզի աւարտեն աճիւնների որոնողափրկարարական աշխատանքները: «News.am»-ին Սաշա Աւանէսեանը պատմում է, որ Արցախից դուրս են եկել հոկտեմբերի 2-ին, երբ որոնողական աշխատանքներն այլեւս արդիւնք չէին տալիս:

«Մենք մեր աշխատանքը պիտի մինչեւ վերջ կատարէինք, յետոյ դուրս գայինք, դրա համար էլ մնացինք մինչեւ վերջ, դիակները չթողնէինք սահմաններին»,- ասում է նա:

Նշենք, որ մայոր Սաշան փորձառու հրշէջ-փրկարար է, 21 տարի համակարգում է աշխատել: Իրենք իրենց 11- հոգանոց խմբով արել են ամէն ինչ, որպէսզի Արցախում դիեր չմնան: Յատկապէս ծանր է եղել բենզինի պահեստում պայթիւնի վայրից դիերի դուրսբերումը:

«Հրդեհը որտեղ եղել է, այնտեղից բոլորի աճիւնները պիտի հանէինք, յետոյ դուրս գայինք: Պայթիւնը եղել է անձրեւոտ եղանակի ժամանակ, կայծակ էր խփում, մենք չենք ջոկել՝ պայթի՞ւն է, թէ՞ կայծակը: Սաղի ձեռքը սիգարետ էր: Նման բան ես չեմ տեսել, ոչ մէկ չի տեսել, նման զոհեր, այրուածքներ, սկզբից ասել էին ցիստեռն ա պայթել, մէկ մարտական հաշուարկ գնաց, յետոյ կապւեցին ու ասացին՝ շտապ եկէք, հարիւրներով զոհ ունենք: Պայթիւնի կենտրոնում ահագին մոխրացած դիակներ կային, կային դիակներ, որ հալած ու իրար կպած էին: Հեռու կանգնածների դիակներն էլ են այրուած, բայց ճանաչելի են»,- պատմում է Սաշան:

Սաշայի դուստրը՝ 6-ամեայ Նանէն, հրաժարւել է հօրից բաժանւել եւ աւագ եղբայրների հետ Հայաստան մեկնել: Կինն ու դուստրը մնացել են Սաշայի հետ մինչեւ վերջ. «Աղջիկս էլ մնաց հետս, լացում էր, ասեցի՝ դու էլ գնայ, ասաց՝ չէ, քանի դու չգնաս, չեմ գալու, մնաց հետս մինչեւ վերջ»:

Սաշան պատմում է՝ ընտանիքին տանը թողնել չէր կարող, վտանգաւոր էր, ստիպւած է եղել Արտակարգ իրավիճակների ծառայութեան շէնք տանել կնոջն ու դստերը:

Նշենք, որ Սաշա Աւանէսեանը 44-օրեայ պատերազմում հրետակոծութեան հետեւանքով ձեռքի վիրաւորում է ստացել: Վերականգնւելուց յետոյ շարունակել է ծառայութիւնը: Ամբողջ կեանքում ինքն ու կինը աշխատել են, տունուտեղ դրել: Երկյարկանի առանձնատնից ընտանիքին մնացել են միայն յիշողութիւններն ու այս տեսանիւթը, որը Սաշան նկարել է տունը լքելուց առաջ. «Ամբողջ կեանքս թողել եմ ընդեղ»:

Սաշայի կինը՝ Մարիաննան, Ստեփանակերտի մանկապարտէզում տնտեսվար էր աշխատում: Երբ սկսւել է Ստեփանակերտի հրետակոծութիւնը, նա սաներին նկուղ է իջեցրել, ու մինչեւ երեկոյ չի կարողացել իր երեխաների հետ կապ հաստատել:

Մարիաննան պատմում է, որ Ստեփանակերտում մնացած փրկարարների համար հաց էր թխում: Յիշում է՝ երբ բոլորն արդէն տեղահանւել էին, քաղաքում մարդ չկար, փրկարարների աշխատանքները միեւնոյն է, չէին դադարում.

«Արդէն քաղաքում մարդ չկար, որոնողական աշխատանքներ էին կատարում դիակների, հիւանդ ու ծեր մարդիկ էին մնացել միայնակ, նրանց էին փնտրում: Արդէն հոկտեմբերի 1-ին ու 2-ին որոնողական աշխատանքներն արդիւնք չէին տալիս, որոշեցին իրենք էլ դուրս գալ, մնալու հնար չկար, թուրքերն ամէն օր գալիս, հարցրնում էին՝ բա դուք ինչի՞ չէք հեւնում, ի՞նչ էք անում այստեղ: Այս տղաներն ամսի 19-ից տուն չէին գնացել, չէին քնել, չէին սնւել, բայց որ զանգում ու ասում էին՝ գնում ենք որոնողականի, այդ 11 հոգին տեղից հեւնում էին, որ զանգում ասում էին՝ մորգ պիտի գնանք, հեւնում ու գնում էին, ոչ էլ ուզում էին դուրս գալ, ասում էին՝ ինչքան շատ մնանք, էնքան շատ կը շնչենք մեր օդը: Յետոյ փրկարարների հետ սաղս միասին դուրս ենք եկել ամսի 2-ին 3-ի գիշերը: Մենք մեր սեփական աւտոյով, դէմից հրշէջ-փրկարարական աւտօներն էին, յետեւից աւտօներն էին»:

Արցախի մասին խօսելիս Մարիաննան անվերջ յուզւում է: Նա քչերից է, որը տեսել է լիովին դատարկւած, լքած Ստեփանակերտը. «Հայրենիք ենք թողել: Գնացել էի տուն, որ շորերս հաւաքէի, գնում-գալիս էի, նայում էի, չգիտէի՝ ինչ վերցնեմ, չկարողացայ, հայրենիքը ճամպրուկի մէջ չես տեղաւորի, մնացածն էլի կը ստեղծենք: Բլոկադան յաղթահարում էինք այն յոյսով, որ ամէն ինչ լաւ կը լինի, ասում էինք՝ զրկանքները կրենք, բայց առանց հայրենիք չմընանք: Սաղս էլ պատրաստակամ էինք յաղթահարել բլոկադան»:

Աւանէսեանների երկու որդիները՝ Վալերին եւ Ալեքսանդրը, զբաղւում են կարատէով, մասնակցել են աշխարհի, Եւրոպայի առաջնութիւններին: Որոշել են՝ Հայաստանում շարունակել այս մարզաձեւով զբաղւել, բայց դեռ պէտք է ուշքի գան կատարւածից, նոր միջավայրին յարմարւել:

Փոքրիկ Նանէն Արցախի տնից հասցրել է սիրելի շանը վերցնել: Արչիին տեղաւորելու համար՝ հրաժարւել է սիրելի խաղալիքները վերցնելուց: 6-ամեայ աղջիկը, որը թերեւս Արցախից դուրս եկած վերջին երեխան է՝ վստահ է, որ իրեն անծանօթ Դաւիթաշէն գիւղի օտարի տունը, որտեղ հիմա նրանք վարձով են ապրում, միայն ժամանակաւոր է, ու մի օր իրենք տուն են գնալու:

««Խաղաղ»...

(Շար. 5-րդ էջից)

– Իսկ ի՞րն է Իրանի դերը մեր եւ տարածաշրջանային խնդիրներում, որքանո՞վ է դա բխում մեր շահերից: Մենք շատ ենք յոյս կապում Իրանի հետ, բայց Ադրբեջանը եւ Իրանը, չնայած իրենց յարաբերութիւններում առկայ խնդիրներին, կարողանում են համագործակցել կոմունիկացիոն հարցերում:

– Իրանը բազմիցս նշել է, որ տարածաշրջանում սահմանների փոփոխութիւնը կարմիր գիծ է իր համար: Բայց միւս կողմից, այո, համագործակցում է Ադրբեջանի հետ: Եթէ մենք ինքներս մեր շահը չենք պաշտպանում, ոչ մէկից չպէտք է ակնկալենք աւելին, քան մենք պէտք է անենք: Կրկնում եմ՝ Իրանը մեր պոտենցիալ դաշնակիցն է, բայց նրանք մեր կողմից պէտք է տեսնեն այդ տրամադրւածութիւնը: Այսինքն, նախ մենք մեր երկիրը պիտի պահելու ցանկութիւն ունենանք, եւ յետոյ նոր ակնկալենք դաշնակցային համագործակցութիւն՝ տարածքային անվտանգութեան առումով: Իրանը փորձում է տարածաշրջանային ոչ մի ծրագրից դուրս չմնալ, իր համար առաջնայինն իր պետութեան շահերն են: Ի վերջոյ, կրօնական հարցերից ելնելով՝ Իրանը խնդիրներ չի ստեղծի Ադրբեջանի հետ: Այնպէս որ, մենք ոչ մէկի հետ չպէտք է յոյսեր կապենք, մենք յոյսը մեզ վրայ պէտք է դնենք, մենք պիտի հզօրանանք, եւ երբ այս ուղին բռնենք, անպայման յայտնւելու են իրական դաշնակիցներ եւ գործընկերներ:

Տարբեր...

(Շար. 3-րդ էջից)

տեղահանումը, որ կարելի եղած է շտապօրէն եւ կայծակնային արագութեամբ լուծել:

Անշուշտ վարչապետին ճառին մէջ, ընդդիմութիւնը կը նկատուէր հակաժողովրդավարական. բնականաբար ոչ մէկ խօսք ռուսիկանական հզօր կառոյցին մասին, կամ յիշեցում՝ որ ռուսիկաններուն գոյութեան իմաստը դարձած է զինք ու գործակիցներու պահպանումը, անշուշտ ո՛չ մէկ խօսք թէ «ժողովրդավարութեան բաստիոն» Հայաստանի մէջ անոնց ձեռքերը ազատ են գործելու ամէն տեսակի բրտութիւն, հալածել ընդդիմադիրներ, մինչեւ իսկ խոշտանգել ու բանտարկել Արցախի մէջ նահատակ տւածներ, որովհետեւ անոնք կը համարձակին բողոքի ձայն բարձրացնել իր ձախաւերութեանց դաժան հետեւանքներուն դէմ…

Փաշինեան չմոռցաւ Ստրասբուրգի բեմահարթակէն անգամ մը եւս հաճոյանալ արեւմուտքցի «հովանաւորներ»-ուն եւ բուռն կերպով քննադատեց Մոսկաւն ու անոր ղեկավարած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութիւնը, յայտարարելով, որ անոնք ոչ մէկ ձեւով թիկունք կանգնեցան, նոյնիսկ երբ Ադրբեջան յարձակեցաւ Հայաստանի վրայ:

Փաշինեան մոռցած էր – եւ զինք լսողներն ալ պատրաստ են մոռնալու – թէ ի՛նք էր որ ազատ արձակեց Ադրբեջանի ձեռքերը, նախ՝ պաշարելու, ապա հայաթափելու Արցախի մնացեալ փոքր տարածքը, երբ տարի մը առաջ ճակատաբաց յայտարարեց, որ Արցախը Ադրբեջան է, իսկ վերջերս ալ «յաւելւած» մը արձանագրեց, Արցախն ու Հայաստանէն մասնիկներ Ադրբեջանի կազմին մէջ ընդունող փաստաթուղթ մը ստորագրելով Գրանադայի մէջ:

Յախտուն միտքեր լսելով՝ եւրոպացին հաւանաբար բաւական գոհ մնաց այս ճառէն, բայց հայորդիին համար ստեղծւած պատկերը եւ ՀՀ վարչապետին արտասանած խօսքերը որքա՛ն հեռու էին իրականութենէն եւ ո՛չ մէկ աղերս ունէին իսկական իրավիճակին հետ: Հանդիսատես ենք Անհեթեթի թատրոնի գլուխ գործոցի մը:

Իսկ բուն մտահոգիչն ու ահազանգայինը… որքա՛ն խորտակւած է հայրենի դիւանագիտութիւնը:

…Որքա՛ն նման ենք «դժգոյն Շուշիին, երբ այս գահավէժ կացութեան մէջ, բիւզանդական անհիմն եւ անհեթեթ վիճաբանութիւններով, նոյնիսկ միակամ ընդդիմութիւն մը չենք կրնար յառաջացնել, որպէսզի վերջ տայ այս խեղկատակութեան, կասեցնէ հայրենիքին վերջնական կորուստը եւ ճամբայ հանէ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ:

«Հայրենիք» , Բոստոն
Խմբագրական

Արման...

(Շար. 3-րդ էջից)

ադրբեջանցիները արդէն նախապէս փակել էին եւ տեղադրել ստուգման կէտ»,- ասաց նա:

Արման Թաթոյեանը նշեց՝ Մարտակերտում եղել են քաղաքացիական անձանց սպանութիւններ, տւեց կոնկրետ անուններ:

Մինչեւ վերջին պատերազմն ամենամօտ ադրբեջանական դիրքերից հեռաւորութիւնը դէպի Վանք գիւղի հայկական դիրքեր 400 մ. էր:

Ըստ նրա՝ առաջին կարեւոր հանգամանքն այն է, որ բոլոր ուղղութիւններով յարձակումը սկսել են միաժամանակ.

«Ռմբակոծում էին ռազմական, պետական անվտանգային համակարգերը եւ ենթակառուցւածքները (էլեկտրականութեան, ջրի մատակարարման, կապի քաղաքացիական համակարգեր): Ասկերանում յարձակումը սկսել են Հարաւ գիւղի ստորոտների վրայ, թշնամին Հարաւ գիւղի դիմացի սարին դիրք է ունեցել եւ խորացել է դէպի Արցախ: Ասկերանի շրջանի տեղահանւած բնակչութիւնը հիմնականում շարժւել է դէպի Իւանեան օդանաւակայան (մօտ 35-40.000 մարդ): Խրամորթ, Յովսէփաւան, Ասկերան, Լուսաձոր, Նորագիւղ, ապա գնացել են Իւանեան: Այգեստան, Աստղաշէն, Դահրաւ, Բերքաձոր, Սառնաղբիւր գիւղերի բնակիչների մի մասը գնացել է Ստեփանակերտ, մի մասը՝ Իւանեան: Հետագայում Ասկերանի ամբողջ շրջանը տեղահանւել է Իւանեան օդանաւակայան»,- ասաց Արման Թաթոյեանը:

Արդիւնքում, ըստ բանախօսի, 90 գիւղերից բռնի տարհանւել է 105.000 մարդ:

«Միաժամանակ յարձակումների արդիւնքում զրկել էին կապի բոլոր հնարաւորութիւններից՝ կառավարման համակարգը խափանելով, ոչնչացրել էին տնտեսական անվտանգութեան ապահովման համակարգը եւ հնարաւորութիւնը, Սարսանգի ջրամբարի վրայ գտնւող Ջրէկ-ները ադրբեջանցիների կողմից վերցնելու արդիւնքում Ստեփանակերտի էներգամատակարարումը դադարեցւել էր, Ղայլալուղում թշնամու յայտնւելուց յետոյ Ստեփանակերտը զրկւել էր նաեւ խմելու ջրի մատակարարումից, մինչդեռ Ստեփանակերտի ջրի մատակարարումը իրականացւել է 2 տեղերից՝ Պատարայից եւ Ղայլալուից: Պատարայի ջրաւազանը կառուցւել էր 2020 թ. պատերազմից յետոյ: Հաւաքւող ջուրը բնական, սարերից, աղբիւրներից եկող ջուրն էր, որը ֆիլտրւում էր եւ մատակարարւում Ստեփանակերտ:

Էներգամատակարարման համակարգերը գրաւելուց եւ հոսանքի մատակարարման հնարաւորութեան բացակայութեան պայմաններում խմելու ջրի մատակարարումը դադարեցւել էր, քանի որ լոյս չկար, որ ֆիլտրն աշխատէր, եւ սպասարկում իրականացնող անձնակազմն էլ չէր կարող գնալ ու մաքրել կամ վերականգնել խափանւած աշխատանքը, քանի որ ադրբեջանական զինւած ուժերն արդէն այնտեղ էին»,- նշեց իրաւապաշտպանը:

Պատասխանելով «Արեւմտեան Ադրբեջան» կեղծ հայեցակարգի մասին հարցին՝ Արման Թաթոյեանը նկատեց՝ եթէ դեռեւս մի քանի տարի առաջ Ալիեւը խօսում էր Սիւնիքի, Գեղարքունիքի ու Երեւանի մասին, հիմա խօսում է ՀՀ ողջ տարածքի մասին:

«Խօսում են մօտ 300000 ադրբեջանցու մասին եւ ասում են, որ նրանց անվտանգութիւնն ապահովելու համար պէտք է Հայաստանում միջազգային խաղաղապահ առաքելութիւն լինի, եւ դա պիտի լինի այնպիսի երկիր, որը վայելելու է այդ մարդկանց վստահութիւնը: Բոլորս հասկանում ենք՝ որ երկրի մասին է խօսքը»,- ասաց Արման Թաթոյեանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի սահմանների շուրջ անվտանգային գօտի ստեղծելու՝ իր առաջարկած հայեցակարգին, Արման Թաթոյեանը նշեց՝ ինքը շարունակում է պնդել դրա կարեւորութեան մասին:

«Սկզբունքօրէն անընդունելի է մեր զօրքերի հայելային յետքաշման ցանկացած փորձ: Պնդում եմ, որ անվտանգութեան գօտին Հայաստանի սահմանների շուրջ պէտք է ստեղծւի»,- ասաց «Թաթոյեան» հիմնադրամի տնօրէնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՈՒՐԲԱԹՕՐԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
արձանագրութեան վերջնաժամկէտ

ոչ-հայկական դպրոցներ յաճախող հայ աշակերտ-աշակերտուհիների համար

Դասընթացները լինելու են առկայ (حضوری)

Այսու յայտնում ենք՝ ովքեր դեռ չեն արձանագրուել, կարող են հինգշաբթի, հոկտեմբերի 26-ին, ժամը՝10:30-ից մինչեւ 12:00-ը դիմել «Շանթ - Մարիամեան» դպրոց:

Արձանագրութեան համար անհրաժեշտ են՝

1- Անձնագրի պատճէնը

2-Պատկան դպրոցի կնքւած ու ստորագրուած նկարով վկայագիրը

گواهی اشتغال به تحصیل عکسدار با مهر و امضاء مدیریت و با قید پایه تحصیلی جهت ارائه به هیئت آموزشی شورای خلیفه گری ارامنه تهران

3- Տարեկան թոշակը

- **7-րդ դասարանից մինչեւ 11-րդ դասարան՝ 12.000.000 ռիալ**
- **12-րդ դասարան 5.500.000 ռիալ**
- **Թոշակը մուծել ազգային առաջնորդարանի ۳۱۹۳ شعبه بانک صادرات, 0102199729002 կամ شبا IR 600190000000102199729002 համարին եւ բանկի ստացականը ներկայացնել արձանագրութեան օրը:**

4- Արձանագրութեան օրը անհրաժեշտ է նաեւ ծնողի եւ աշակերտի ներկայութիւնը:

Նշելի է դասագրքերը (կրօն, հայոց պատմութիւն եւ մայրենի) գնելու համար դիմել նախապէս յայտնած գրախանութներից:

Դասընթացները սկսւելու են հոկտեմբերի 27-ից (աբանի 5)

«Շանթ - Մարիամեան» դպրոցի հասցէ՝

مجیدیه جنوبی ، خ گلبرگ، خیابان ۱۶ متری دوم، کوچه رحمتی، پلاک ۲۷

Թ. Հ. Թ. ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY

هواپیمایی قشم
QeshmAir

نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում

երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝

դէպի Հայաստան եւ վերադարձ

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM

۸۸۵۱۴۰۵۰

آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی

7 STARS



هواپیمایی قشم Qeshm Air

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES

VARESH AIRLINES هواپیمایی وارش

Armenia airways

7setaretours

خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :

✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում

✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում

مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان

09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագոյց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Վարդուհի Շահիջանեանին (Մադաթովեան), Կարօ եւ Արսինէ Շահիջանեաններին, Թալին եւ Ալեքս Այւազեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՀԻՋԱՆԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

«ՍԱՍՈՒՆ» ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ՄՇՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Դեռ շա՛տ....

(Շար. 2-րդ էջից)

յարաբերութիւններ հաստատէր Իրանի հետ, բացի մէկ-երկու պրոտոկոլային յայտարարութիւններից, այլ բան չենք տեսնում:

- ՀՅԴ-ն Երեւանի աւագանու ընտրութիւններից առաջ փորձ է արել լայն ճակատով, միասնական թեկնածուով ներկայանալ: Յաւոք սրտի, չստացուեց: Որեւէ մէկը չի ասել, որ Անդրանիկ Թեւանեանը միասնական թեկնածու է եղել կամ հետագայ բողոքի գործողութիւնների ժամանակ՝ լիդեր:

- Հարթակից խօսել առաջարկւել է մօտ 30 հոգու հրաժարւել են:

- Պէտք է անկեղծ ասել վերջին հանրահաւաքներում հրապարակում այդ օրերին կանգնած մեր հայրենակիցների մեծ մասի պահանջը Հակարիի կամրջի բացումն էր:

- 2021 թ. խորհրդարանական ընտրութիւններին ընդդիմադիր «Հայաստան» դաշինքին ձայն տուողները ձայն էին տալիս ապագայի կառավարութեանը:

- Ամէն մէկը պիտի համարի, որ ընդդիմութիւնն ինքն է, որովհետեւ սա մի հոգու կամ մի կառոյցի խնդիր չէ: Այսօրւայ ընդդիմութեան պայքարը նախորդ 30 տարիների ընդդիմութեան պայքարը չէ: Իրավիճակը տարբեր է: Պէտք է վայրկեան առաջ ազատւել այս իշխանութիւնից:

- Ենթադրենք՝ իմփիչմենթի գործընթացը յաջողութեամբ աւարտւեց, եւ պայմանական մէկը դարձաւ վարչապետ: Ի՞նչ է անելու նա, օրինակ, արտաքին ճակատում Վահան Կոստանեան ԱԳ փոխնախարարով, բանակից փախած մի մարդ, ում առաջին աշխատանքը 2018-ից յետոյ ՀՀ փոխվարչապետի օգնական լինելն էր:

«168.am»

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն

خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه

Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۴۲، واحد ٦

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

مسافربری بین المللی

www.didarseir.ir
Email:info@didarseir.ir

دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity

دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237



دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

- Մէկ տեղանոց (VIP)
- Աթոռ մահճակալ
- Մոնիտորով
- Յագեցած է WiFi-ով

««3+3»....

(Շար. 1-ին էջից)

առաջ տանել թէզը, որ տարածաշրջանի հարցերը պէտք է լուծուեն տարածաշրջանի երկրների ձեւաչափում, եւ ադրբեջանական կողմի այս մօտեցման արդիւնքում է, որ կայանում է «2+3» ձեւաչափի երկրորդ նիստը:

«Իրականում, դեռեւս պատերազմից յետոյ երբ Ադրբեջանն ու Թուրքիան առաջ քաշեցին «3+3»-ի գաղափարը այս երկրները միտում ունէին չէզոքացնել այդ ժամանակ գոյութիւն ունեցող բանակցային հարթակները, որին հասնելուց յետոյ «3+3»-ը մոռացութեան մատնուեց, եւ միայն Իրանն էր, որ շարունակ յիշեցնում էր բանակցութիւնների այս ֆորմատի անհրաժեշտութեան մասին, նաեւ չմոռանանք, որ Իրանի արտաքին քաղաքականութեան հիմնաքարերից այն է, որ տարածաշրջանի հարցերը պէտք է լուծուեն տարածաշրջանի երկրների միջոցով, հետեւաբար այս հարթակը լիովին Իրանի ցանկութեամբ է»,- նշեց իրանագէտը:

Ինչ վերաբերւում է Ադրբեջանին, ապա Վարդանեանը կարծում է, որ Ադրբեջանը այժմ էլ օգտագործում է բանակցութիւնները միւս հարթակներից խուսափելու համար, եւ միտում չունի գործընթացը հիմնական դարձնելու եւ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման համար, որովհետեւ առհասարակ, Ադրբեջանի քաղաքականութիւնը միտուած չէ, բանակցային ճանապարհով հարցերը կարգաւորելուն, այլ ցանկացած իրավիճակում, Ադրբեջանը դիմում է ուժի կիրառման եւ այդ կերպով է զիջումներ կորզում:

«Միւս կողմից, չեմ կարծում, որ Ադրբեջանը, Թուրքիան ինչպէս նաեւ՝ Ռուսաստանը ցանկութիւն ունենան, Իրանի դերակատարութեան մեծացման բանակցային հիմնական գործընթացներում եւ Իրանը տեսնել որպէս ակտիւ մասնակցի, հետեւաբար «3+3» չի դառնայ հիմնական ձեւաչափ, որով հնարաւոր կը լինի թէ՛ խաղաղութեան պայմանագիր կոչուածը ձեւակերպել, թէ՛ որեւէ այլ տեսակի հարց լուծել:

Այսինքն հակուած չեմ կարծել, որ Ադրբեջանը եւ Թուրքիան կը ցանկանան Իրանի ակտիւ մասնակցութիւնը, մասնաւորապէս Սիւնիքի ուղղութեամբ Իրանի ունեցած դիրքորոշման պատճառով»,- նշեց իրանագէտը:

Անդրադառնալով, «3+3» ձեւաչափի ֆոնին, Ադրբեջանի ու Թուրքիայի անցկացրած համատեղ զօրավարժութիւններին Ժաննա Վարդանեանը յիշեցրեց, որ նրանք յաճախ են զօրավարժութիւններ անցկացնում, որոնք նաեւ ցուցիչ է առ այն, որ այդ երկրները չեն հրաժարւել «Զանգեզուրի միջանցք»-ից, թէեւ վերջին շրջանում «հռետորաբանութեան մեղմացում» է նկատւում եւ խօսւում է այն մասին, որ սակայն, բնաւ չի նշանակում, որ իրենք դադարում են Սիւնիքի նկատմամբ ունեցած նկրտումներից, պարզապէս, ժամանակաւորապէս տակտիկա են փոխում, որով միտում ունեն Հայաստանին ճնշելու եւ ցոյց տալու, իբր Հայաստանը դուրս է մնում տարանցիկ՝ նախագծերից եւ այդ ճանապարհով հասնել՝ Սիւնիքի օկուպացիային:

«Սիւնիքի օկուպացիան թուրք-ադրբեջանական օրակարգում է եւ այն միանգամայն ակնյայտ է թէ՛ այս երկրների կողմից իրականացող քարոզչութեան, թէ՛ երկարաժամկէտ պլաններից, որը որդեգրել են Ադրբեջանն ու Թուրքիան, ընդորում ոչ միայն Սիւնիքի, այլ ամբողջ Հայաստանի նկատմամբ»,- յստակեցրեց իրանագէտը:

Յիշեցնենք, որ համագործակցութեան տարածաշրջանային այս ձեւաչափն առաջարկուել է 44-օրեայ պատերազմից յետոյ: Ձեւաչափի երկրորդ նիստը կանցկացւի այսօր հոկտեմբերի՝ 23-ին Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Ռուսաստանի եւ Իրանի արտգործնախարարները կը հանդիպեն Թեհրանում, որից առաջ միայն մէկ հանդիպում է կայացել՝ 2021 թւականի վերջին՝ առանց Վրաստանի:

ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հեպեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲ و ۵- ۸۸۵۴۱۲۹۸ -۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،

چراغ لاله و لوستر،

رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،

لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،

مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

Իրանը Հայաստանի հետ առեւտրային գործարքներում կանցնի ազգային արժոյթով հաշւարկի, Ռուսաստանի հետ՝ կը զրոյացնի մաքսատուրքերը

«ԱԼԻՔ» - Իրանը Հայաստանի հետ առեւտրային գործարքներում կանցնի ազգային արժոյթով հաշւարկի, Ռուսաստանի հետ՝ կը զրոյացնի մաքսատուրքերը:

«Parstoday.ir»-ի համաձայն՝ մօտ ժամանակներս Իրանը Ռուսաստանի, Հայաստանի եւ Բելոռուսիայի հետ առեւտրային գործառնութիւններում կանցնի ազգային արժոյթով հաշւարկի, իսկ մաքսային սահմաններն ամբողջութեամբ բաց կը լինեն այդ երկրներից ապրանքների ներմուծման համար, հոկտեմբերի 22-ին յայտարարել է Ռուս-իրանական համատեղ առեւտրական պալատի մասնակից Քամբիզ Միրքազեմին:

Նրա խօսքով՝ Իրանն ու Ռուսաստանը պայմանաւորուել են 2024 թւականի մարտին հանել երկու երկրներից ապրանքների ներմուծման մաքսատուրքերը:

«Մինչեւ տարեվերջ Իրանի եւ Ռուսաստանի միջեւ մաքսային տուրքերը կը հանուեն»,- ասել է Միրքազեմին:

Բանակի ՀՕՊ զօրքերի հրամանատար.

«Ռասուլ» ԱԹՍ նախագիծը ներկայացրել է անօդաչու հակաօդային պաշտպանութեան նոր հասկացութիւն

«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական Հանրապետութեան հակաօդային պաշտպանութեան ուժերի հրամանատարն ընդգծել է. ««Ռասուլ» ԱԹՍ նախագիծն աշխարհին ներկայացրել է անօդաչու հակաօդային պաշտպանութեան նոր հասկացութիւն»:

Արդիւնաւէտ նախագծերի, գաղափարների ու արտադրանքի, այդ թւում՝ պաշտպանութեան ոլորտում «Ռասուլ» ԱԹՍ նախագծի ի յայտ գալով համաշխարհային ասպարէզում մարտական ու պաշտպանական դոկտրինայի հաւասարումներն ու մեթոդները հիմնարար փոփոխութիւնների կենթարկուեն, որոնց արդիւնքում կը ստեղծի անորոշութեան մթնոլորտ եւ միւսների նկատմամբ կը մեծանայ կանխարգելիչ ուժը:

Parstoday.ir-ի հաղորդման համաձայն՝ բանակի հակաօդային պաշտպանութեան ուժերի հրամանատարը յաւելել է. «Ռասուլ» ԱԹՍ նախագծի շրջանակում տեղի են ունեցել լայնածաւալ եւ զգայուն դաշտային եւ օպերատիւ փորձարկումների 9 փուլեր, եւ տարբեր թռիչքային փորձարկումների իրականացման կարեւորագոյն կէտերից մէկը՝ բոլոր բաժինների խորը եւ արդիւնաւէտ համագործակցութիւնն է:

Գեներալ-մայոր Սաբահիֆարդը նաեւ ասել է. «Այս նախագծում, օգտագործելով անօդաչու թռչող սարքեր, որոնք արդիականացուելով վերածուել են ամբողջովին տեղական «օդ-օդ» հրթիռների, ձեռք է բերուել օպերատիւ տիրոյթում թշնամու թռչող սարքերին եւ թիրախներին հետեւելու եւ դրանց դէմ պայքարելու կարողութիւն»:

Գեներալ-մայոր Սաբահիֆարդն ասել է. «Սահմանափակ թւով երկրներ ունեն այս տեխնոլոգիան: «Ռասուլ» նախագծի օպերատիւ փորձարկման յաջողութիւնը եւ որպէս հակաօդային պաշտպանութեան մեծ նւաճում՝ օդային մարտունակութեամբ զինուած անօդաչու թռչող սարքերի ձեռքբերումը զգալիօրէն բարձրացրել են հակաօդային պաշտպանութեան մարտունակութեան մակարդակը եւ ուղղակիօրէն ազդել պաշտպանական կանխարգելիչ ուժի վրայ»:

Ամիր Աբդօլլահեան.

«Գազայում պատերազմի շարունակման ցանկացած սխալ հաշւարկ կարող է լուրջ հետեւանքներ ունենալ տարածաշրջանում»

«ԱԼԻՔ» - Այս պատերազմի շարունակման, ցեղասպանութեան եւ Գազայի ու Արեւմտեան ափի բնակիչների բռնի տեղահանման ցանկացած սխալ կարող է լուրջ հետեւանքներ ունենալ տարածաշրջանում, յայտարարել է ԱԳ նախարար Հոսէյն Ամիր Աբդօլլահեանը Հարաւային Աֆրիկայի Հանրապետութեան արտգործնախարար Գրէյս Նալեդի Մանդիսայի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

Ըստ ԱԳ նախարարի, այսօր տարածաշրջանը նման է վառօդի տակառի:

«Ուզում եմ զգուշացնել ԱՄՆ-ին եւ նրա վստահուած անձին՝ կեղծ իսրայէլական ռեժիմին, որ եթէ նրանք անյապաղ չդադարեցնեն մարդկութեան դէմ յանցագործութիւնները եւ ցեղասպանութիւնը Գազայում, տարածաշրջանը դուրս կը գայ վերահսկողութիւնից», - ասել է նա:

«Այն, ինչ մենք տեսանք այսօր Գազայում, դա կեղծ իսրայէլական ռեժիմի միջնորդաւորուած պատերազմ է», - ասել է Ամիր Աբդօլլահեանը՝ յաւելելով, որ սիոնիստական ռեժիմս այս պատերազմը մղում է ճնշուած ազգի եւ պաղեստինցի քաղաքացիական բնակչութեան դէմ ԱՄՆ-ի անունից:

Մեկնաբանելով ԱՄՆ նախագահ Ջօ Բայդէնի այցը Թել Աւիւ՝ Իրանի արտաքին քաղաքական գերատեսչութեան նախարարն ասել է, որ Բայդէնը պաշտօնապէս յայտարարել է, որ հարիւրաւոր ինքնաթիռներ, նաւեր եւ զէնքով բեռնուած բեռնատարներ կուղարկի՝ «ի աջակցութիւն Գազայում Իսրայէլի կողմից իրականացող սպանութիւնների եւ կոտորածների»:

Այսօր Թեհրանում....

(Շար. 1-ին էջից)

«Վրաստանը չի մասնակցում նշուած հանդիպմանը եւ երբեք չի մասնակցել:

Այսպէս կոչուած «3+3» նախաձեռնութիւնը պատկանում է Թուրքիայի նախագահ Ռեջեպ Թայիփ Էրդողանին: Այս ձեւաչափով առաջին հանդիպումը տեղի է ունեցել Մոսկւայում 2021 թւականի դեկտեմբերի 10-ին:

Թուրքիայի հետ միասին դրան մասնակցում են Ռուսաստանը, Հայաստանը, Ադրբեջանը եւ Իրանը:

Վրաստանի պաշտօնական դիրքորոշումս այն է, որ ռուսաստանեան գործօնի պատճառով չի մասնակցի նշուած ձեւաչափին»,- ասուած է յայտարարութեան մէջ:

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه ست

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ -۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی